ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 808-Ն	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2009.07.29/38(704) Հոդ.895	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	09.07.2009
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	21.07.2009
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	08.08.2009	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

[+] Կապեր այլ փաստաթղթերի հետ
[+] Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի N 372 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հուլիսի 2009 թվականի N 808-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի N 372 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը փոփ. 04.06.14 N 588-Ն)

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

1) նախադպրոցական կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) նախադպրոցական կրթական ծրագրի իրականացման լիցենզիայի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) տարրական հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան, տարրական մասնագիտացված՝ 1-ին աստիճան, տարրական հատուկ՝ 1-ին աստիճան լիցենզավորման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) տարրական հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան, տարրական մասնագիտացված՝ 1-ին աստիճան, տարրական հատուկ՝ 1-ին աստիճան լիցենզիայի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) հիմնական հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան, հիմնական մասնագիտացված՝ 2-րդ աստիճան, հիմնական հատուկ՝ 2-րդ աստիճան լիցենզավորման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) հիմնական հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան, հիմնական մասնագիտացված՝ 2-րդ աստիճան, հիմնական հատուկ՝ 2-րդ աստիճան լիցենզիայի ձևը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) միջնակարգ հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ միջնակարգ ընդհանուր՝ 3-րդ աստիճան, միջնակարգ մասնագիտացված՝ 3-րդ աստիճան, միջնակարգ հատուկ՝ 3-րդ աստիճան լիցենզավորման կարգը՝ համաձայն N

7 հավելվածի.

8) միջնակարգ հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ միջնակարգ ընդհանուր՝ 3-րդ աստիճան, միջնակարգ մասնագիտացված՝ 3-րդ աստիճան, միջնակարգ հատուկ՝ 3-րդ աստիճան լիցենզիայի ձևը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) ***(ենթակետն ուժը կորցրել է 27.05.10 N 646-Ն)***

10) ***(ենթակետն ուժը կորցրել է 27.05.10 N 646-Ն)***

11) նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացման, լիցենզավորման կարգը՝ համաձայն N 11 հավելվածի.

12) նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացման, լիցենզիայի ձևը՝ համաձայն N 12 հավելվածի.

13) միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 13 հավելվածի.

14) միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի ձևը՝ համաձայն N 14 հավելվածի.

15) ***(ենթակետն ուժը կորցրել է 30.08.12 N 1107-Ն)***

16) ***(ենթակետն ուժը կորցրել է 30.08.12 N 1107-Ն)***

17) բակալավրի կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 17 հավելվածի.

18) բակալավրի կրթական ծրագրի իրականացման լիցենզիայի ձևը՝ համաձայն N 18 հավելվածի.

19) մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 19 հավելվածի.

20) մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման լիցենզիայի ձևը՝ համաձայն N 20 հավելվածի:

(1-ին կետը փոփ. 27.05.10 N 646-Ն, լրաց. 19.08.10 N 1049-Ն, լրաց., փոփ. 30.08.12 N 1107-Ն, փոփ. 04.06.14 N 588-Ն)

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետությունում կրթական գործունեության լիցենզավորման, ինչպես նաև միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների ու դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգերը հաստատելու մասին» N 372 որոշման 1-ին կետի «ա» ենթակետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Տ. Սարգսյան

2009 թ. հուլիսի 21
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է նախադպրոցական կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման գործընթացը և կարգավորում լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:

2. Նախադպրոցական կրթական ծրագիր իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում է, դադարեցնում կամ դադարեցման մասին դատարան դիմում է ներկայացնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

(2-րդ կետը փոփ. 17.12.20 N 2089-Ն)

3. Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու և նախադպրոցական տարիքային փուլերով (վաղ, կրտսեր, միջին, ավագ) գործունեության թույլտվության և համակազմի սահմանային տեղերի թվ փոփոխության մասին որոշումն ընդունվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով: Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշումներն ընդունվում են նախարարության կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունների հիման վրա:

(3-րդ կետը խմբ. 04.06.14 N 588-Ն, փոփ., լրաց. 17.12.20 N 2089-Ն)

4. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի կրթական գործունեության լիցենզավորումն ուսումնական հաստատության հայտի հիման վրա իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Ուսումնական հաստատության մասնաճյուղի համար լիցենզիան տրվում է մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատությանը:

5. Լիցենզիա տալու մասին որոշումներն ընդունվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան:

5.1. Լիցենզավորված անձանց՝ լիցենզիայի հետ միասին տրամադրվում է լիցենզիայի ներդիր, որը համարվում է լիցենզիայի անբաժանելի մասը: Լիցենզիայի ներդիրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը:

(5.1-ին կետը լրաց. 27.05.10 N 646-Ն, 24.03.11 N 536-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

5.2. Սույն կարգի գործողությունը համայնքային ենթակայության չլիցենզավորված նախադպրոցական հաստատությունների վրա տարածվում է 2015 թվականի հունվարի 1-ից: Մինչ այդ ժամանակահատվածի լրանալը դրանք լիցենզավորման համար կարող են դիմել սեփական նախաձեռնությամբ:

(5.2-րդ կետը լրաց. 27.05.10 N 646-Ն, խմբ. 04.04.13 N 320-Ն)

5.3. Լիցենզավորված անձինք լիցենզավորող մարմին են ներկայացնում լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություն, որի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը: Հաշվետվությունները ներկայացվում են լիցենզիան ստանալու հաջորդ տարվանից՝ տարեկան մեկ անգամ, և դրանք ներկայացնելու ժամկետ է համարվում լիցենզիան ստանալու հաջորդ օրը:

(5.3-րդ կետը լրաց. 30.08.12 N 1107-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

6. Նախադպրոցական կրթական ծրագրի իրականացման լիցենզիա ստանալու համար «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի, 28-րդ հոդվածի և «Կրթության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հայտատուն ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) հայտ (ձև N 1), որում նշվում է իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը, իրականացվելիք կրթական ծրագրի անվանումը, կրթության ձևը, ուսուցման տևողությունը, ուսուցման լեզուն, ավարտական փաստաթղթի անվանումը, սովորողների համար համակազմի սահմանային նախատեսվող թիվը՝ ըստ նախադպրոցականի տարիքային փուլերի (համակազմի սահմանային նախատեսվող թիվը հայտատուի կողմից հաշվարկվում է, հաշվի առնելով մեկ սովորողի հաշվով ուսումնական տարածքի նորմատիվների, ուսումնադիդակտիկ պարագաների, նյութերի, գույքի, գրադարանային-տեղեկատվական համակարգի հագեցվածության չափաքանակները), լիցենզիայի գործողության ժամկետը.

2) ***(ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)***

3) ***(ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)***

4) լիցենզավորվող գործունեության տեսակի իրականացման համար նախատեսվող տարածքի նկատմամբ իրավունքի (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) գրանցման վկայականի պատճենը.

5) տեղեկանք մանկավարժական կազմի վերաբերյալ, որտեղ նշվում է մանկավարժների անունը, ազգանունը, կրթությունը, այն ուսումնական հաստատության անվանումը, որն ավարտել է, որակավորումը, պաշտոնը, առարկան, որը դասավանդելու է, տեղեկություն աշխատանքի հիմնական կամ համատեղության մասին, ստաժը (վարչական/մանկավարժական), տարակարգը (ձև N 2).

6) տեղեկանք նախադպրոցական կրթական ծրագիր իրականացնելու համար զբաղեցրած տարածքների մակերեսների, այդ թվում՝ խմբասենյակի, խաղասենյակի, ննջասենյակի, հանդերձարանի, բուֆետային մասի, զուգարանի, մարզադահլիճի, երաժշտական պարապմունքների դահլիճի, մեթոդկաբինետի վերաբերյալ (ձև N 3).

7) տեղեկանք ուսումնական գործընթացի գրադարանային-տեղեկատվական ապահովվածության վերաբերյալ (ուսումնադիդակտիկ, ուսումնադիտողական պարագաներ, տեխնիկական միջոցներ) (ձև N 4).

8) նախադպրոցական կրթական ծրագրով նախատեսված շաբաթական պարապմունքների ժամանակացույցը, ուսուցանվող առարկայական ծրագրի ցանկը, օրվա ռեժիմը.

9) երեխաների ընդունելության կարգը.

10) կրթական ծրագրերի իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի պատճենը կամ լիցենզավորվող իրավաբանական անձի կողմից տեղեկանք կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցո դրամական հաշվարկներով գործարքներ չիրականացնելու մասին:

(6-րդ կետը խմբ. 02.06.11 N 741-Ն, փոփ. 28.04.11 N 636-Ն, 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն, 20.09.18 N 1047-Ն)

6.1. Հայտատուն լիցենզիա ստանալու համար սույն կարգով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը կարող է ներկայացնել նաև էլեկտրոնային համակարգի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

(6.1-ին կետը լրաց. 24.03.11 N 536-Ն)

7. Հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու և լիցենզավորման մասին

եզրակացություն տալու նպատակով իրականացվում է ուսումնասիրություն: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրությունները կարող են իրականացվել հայտատուի մոտ:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Լիցենզավորման պարտադիր պահանջները և պայմաններն են՝

1) ներկայացված հայտի (N 1 ձև) ձևի համապատասխանությունը սույն կարգով հաստատված հայտի (N 1 ձև) ձևին և դրանում ներկայացված տեղեկությունների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) հաստատության մանկավարժական կազմի համապատասխանությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված՝ ՀՀ ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերի պահանջներին, մանկավարժական կազմի առնվազն 80%-ի համար տվյալ ուսումնական հաստատությունը հանդիսանում է հիմնական աշխատավայր.

3) ուսումնական տարածքի ապահովվածության պահանջի մասով՝

ա. զբաղեցրած ուսումնական տարածքների (այդ թվում՝ խմբասենյակի, խաղասենյակի, ննջասենյակի, հանդերձարանի, բուֆետային մասի, զուգարանի, մարզադահլիճի, հանդիսությունների դահլիճի, մեթոդկաբինետի, բակային տարածքի) համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի «Նորմատիվատեխնիկական ակտերի կանոնակարգման մասին» N 82 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող հանրապետական և միջպետական շինարարական նորմերով սահմանված նախադպրոցական ուսումնական հաստատությունների տարածքների նորմատիվների պահանջներին, տարածքների նկատմամբ իրավունքը (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) հաստատող փաստաթղթերի առկայությունը,

բ. խմբասենյակի, խաղասենյակի, ննջասենյակի, հանդերձարանի, բուֆետային մասի, մարզադահլիճի, հանդիսությունների դահլիճի, մեթոդկաբինետի՝ ուսումնադիդակտիկ պարագաներով, նյութերով, գույքով հագեցվածության համապատասխանությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատած նախադպրոցական կրթության պետական չափորոշչի պահանջներին.

4) ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով՝ ուսումնական հաստատության ուսումնական պարապմունքների ժամանակացույցի, նախատեսված դասընթացների առարկայական ծրագրի, երեխաների ընդունելության կարգի համապատասխանությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատած նախադպրոցական կրթության պետական չափորոշչի պահանջներին.

5) գրադարանային-տեղեկատվական համակարգի պահանջի մասով՝ ուսումնադիդակտիկ, ուսումնազննական, մեթոդական, գեղարվեստական, մասնագիտական, տեղեկատվական և այլ գրականության հագեցվածության համապատասխանությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված չափաքանակների պահանջներին.

6) գործունեության իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի առկայությունը, եթե այդ գործունեության մասով հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառումը, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, պարտադիր է:

(8-րդ կետը խմբ. 02.06.11 N 741-Ն, 24.03.11 N 536-Ն, լրաց. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

9. Կրթական ծրագրի իրականացման լիցենզիայի գործողության կասեցումը և դադարեցումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

10. Օրենքներով և սույն կարգով նախատեսված լիցենզիայի պարտադիր պահանջների կամ պայմանների խախտումները վերացնելու մասին համապատասխան հիմնավորող փաստաթղթերը լիցենզավորված անձը ներկայացնում է նախարարություն:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյա**

Ձև N

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱ

_____ -ի

_____ - ի

(հայտատուի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական
ձևը, պետական գրանցման համարը)

_____

(գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mai

_____

(գործունեության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mai

Հ Ա Յ Տ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ

NN ը/կ	Կրթական ծրագիրը	Հաստատու-թյան տեսակը	Նախադպրոցականի տարիքային փուլերը	Համակազմի սահմանային թիվը	Կրթու-թյան ձևը	Ուսուցման տևողությունը	Ուսուցման լեզուն	Ավարտական փաստաթուղթը	Լիցենզիայի գործողության ժամկետը
1	2	3	4	5	6	7	8	9	10
			վաղ տարիք						
			կրտսեր նախա-դպրոցական տարիք						
			միջին նախադպրոցական տարիք						
			ավագ նախա-դպրոցական տարիք						

_____ _____ __ թ. Դիմող՝ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն, 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն, փոփ., լրաց. 17.12.20 N 2089-Ն

Ձև N

_____ _____ թ

_____

(կազմակերպության անվանումը, գործունեության տեսակը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը)

Տնօրեն _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ

NN ը/կ	Անունը, ազգանունը	Կրթությունը, այն ուսումնական հաստատության անվանումը, որն ավարտել է	Որակավո-րումը	Պաշտոնը, դասավանդած առարկան	Աշխատանքը (հիմնական, համատեղությամբ)	Ստաժը վարչական/ մանկավարժական	Տարակարգ

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն)

Ձև N

_____ _____ Թ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

Կազմակերպության անվանումը _____

Տնօրենի անունը, ազգանունը _____ _____

(ստորագրությունը)

Գործունեության իրականացման վայրը _____

Շինության տիպը՝ տիպային, հարմարեցված (ընդգծել), այլ

Շինության նկատմամբ իրավունքի տեսակը _____

Շինության ընդհանուր մակերեսը _____ քառ. մետր, որից՝

Անվանումը	Քանակը	Յուրաքանչյուրի մակերեսը (քառ. մետր)	Տարածքի նկատմամբ իրավունքի տեսակը
Խմբասենյակ			
Խաղասենյակ			
Ննջասենյակ			
Հանդերձարան			
Բուֆետային մաս			
Զուգարան			
Երաժշտական պարապմունքների դահլիճ			
Մեթոդկաբինետ			
Մարմնամարզական պարապմունքների դահլիճ			
Բակային տարածք			
Այլ նշանակության			

Կից ներկայացվում են՝
1) խմբասենյակների, խաղասենյակների, մեթոդկաբինետի, բակային տարածքի հագեցվածության ցուցակը.
2) մարզագույքի ցուցակը:
(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն, լրաց. 20.09.18 N 1047-Ն)

Ձև N

_____ _____ Ի

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ

Կազմակերպության անվանումը _____

Գործունեության տեսակը _____

Տնօրեն _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Գրքերի ընդհանուր թիվը _____ , որից՝ ուսումնական ձեռնարկներ_____,

ծրագրային (մանկական) գեղարվեստական _____, ուսումնամեթոդական _____ ,

ուսումնաօժանդակ _____ , էլեկտրոնային-տեղեկատվական _____ ,

այլ _____ :

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն)
(հավելվածը լրաց. փոփ. 27.05.10 N 646-Ն, փոփ. 17.02.11 N 140-Ն, խմբ. 02.06.11 N 741-Ն, փոփ. 28.04.11 N 636-Ն, լրաց., փոփ., խմբ. 24.03.11 N 536-Ն, լրաց. 30.08.12 N 1107-Ն, խմբ. 04.04.13 N 320-Ն, խմբ., լրաց. 04.06.14 N 588-Ն, լրաց. 20.09.18 N 1047-Ն, փոփ., լրաց. 17.12.20 N 2089-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյա**

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա **N 0000**

Սույնով վավերացվում է, որ

_____
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

_____
(գտնվելու վայրը)

_____

(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Նախադպրոցական կրթական ծրագիր

Նախարար _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ _____ թ

Կ.Տ.

_____

(լիցենզիայի գործողության ժամկետ

Սերիա 000 N 000000

(հավելվածը փոփ., լրաց. 27.05.10 N 646-Ն, 17.12.20 N 2089-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյա**

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՏԱՐՐԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ 1-ԻՆ ԱՍՏԻՃԱՆ, ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ՝ 1-ԻՆ ԱՍՏԻՃԱՆ, ՏԱՐՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ՝ 1-ԻՆ ԱՍՏԻՃԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է տարրական հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ տարրական ընդհանուր 1-ին աստիճան, տարրական մասնագիտացված՝ 1-ին աստիճան, տարրական հատուկ՝ 1-ին աստիճան լիցենզավորման գործընթացը և կարգավորում լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:

2. Տարրական ընդհանուր կրթական ծրագիր իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում է, դադարեցնում կամ դադարեցման մասին դատարան դիմում է ներկայացնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

(2-րդ կետը փոփ. 17.12.20 N 2089-Ն)

3. Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշումն ընդունվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով: Նման որոշումներն ընդունվում են նախարարության կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունների հիման վրա «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

(3-րդ կետը փոփ. 17.12.20 N 2089-Ն)

4. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի կրթական գործունեության լիցենզավորումն ուսումնական հաստատության հայտի հիման վրա իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Մասնաճյուղի համար լիցենզիան տրվում է մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատությանը:

5. Լիցենզիա տալու մասին որոշումներն ընդունվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան:

5.1. Լիցենզավորված անձանց՝ լիցենզիայի հետ միասին տրամադրվում է լիցենզիայի ներդիր, որը համարվում է լիցենզիայի անբաժանելի մասը: Լիցենզիայի ներդիրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը:

(5.1-ին կետը լրաց. 27.05.10 N 646-Ն, 24.03.11 N 536-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

5.2. Լիցենզավորված անձինք լիցենզավորող մարմին են ներկայացնում լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություն, որի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը: Հաշվետվությունները ներկայացվում են լիցենզիան ստանալու հաջորդ տարվանից՝ տարեկան մեկ անգամ, և դրանք ներկայացնելու ժամկետ է համարվում լիցենզիան ստանալու հաջորդ օրը:

(5.2-րդ կետը լրաց. 30.08.12 N 1107-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

6. Տարրական հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան, տարրական մասնագիտացված՝ 1-ին աստիճան, տարրական հատուկ՝ 1-ին աստիճան լիցենզիա ստանալու համար «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի, 28-րդ հոդվածի և «Կրթության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հայտատուն ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) հայտ (ձև N 1), որում նշվում է իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը, իրականացվելիք կրթական ծրագրի անվանումը, կրթության ձևը, տևողությունը, ուսուցման լեզուն, ավարտական փաստաթղթի անվանումը, սովորողների համար համակազմի նախատեսվող սահմանային թիվը, (համակազմի նախատեսվող սահմանային թիվը հայտատուի կողմից հաշվարկվում է, հաշվի առնելով մեկ սովորողի հաշվով ուսումնական տարածքի նորմատիվների, դասասենյակների, դասարան-խաղասենյակների, հանգստի սենյակի, ձեռքի աշխատանքի սենյակի, մարզադահլիճի, գրադարանային-տեղեկատվական համակարգի հագեցվածության չափաքանակները), լիցենզիայի գործողության ժամկետը.

2) ***(ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)***

3) ***(ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)***

4) լիցենզավորվող գործունեության տեսակի իրականացման համար նախատեսվող տարածքի նկատմամբ իրավունքի (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) գրանցման վկայականի պատճենը.

5) տեղեկանք մանկավարժական կազմի վերաբերյալ, որտեղ նշվում է մանկավարժների անունը, ազգանունը, կրթությունը, այն ուսումնական հաստատության անվանումը, որն ավարտել է, որակավորումը, պաշտոնը, առարկան, որը դասավանդելու է, տեղեկություն աշխատանքի (հիմնական կամ համատեղության) մասին, ստաժը (վարչական/մանկավարժական), տարակարգը (ձև N 2).

6) տեղեկանք տարրական ընդհանուր կրթական ծրագիր իրականացնելու համար զբաղեցրած տարածքների մակերեսների, այդ թվում՝ դասարան-խաղասենյակի, հանգստի սենյակի, ձեռքի աշխատանքի (մոդելավորման, տեխնիկական խաղալիքների և կիրառական արվեստի) սենյակի, համապիտանի դասասենյակների (երկարօրյա խմբերի համար), մեթոդական կաբինետ-ուսուցչանոցի, հանդիսությունների դահլիճի, մարզադահլիճի վերաբերյալ (ձև N 3).

7) տեղեկանք ուսումնական գործընթացի գրադարանային-տեղեկատվական ապահովվածության վերաբերյալ (գրադարան, ընթերցասրահ, դասագրքային, էլեկտրոնային-տեղեկատվական) (ձև N 4).

8) կրթական ծրագրի ուսումնական պլանները, առարկայական ծրագրի ցանկը.

9) սովորողների ընդունելության, փոխադրման, ավարտական քննությունների կազմակերպման կարգերը.

10) կրթական ծրագրերի իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի պատճենը կամ լիցենզավորվող իրավաբանական անձի կողմից տեղեկանք կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցո դրամական հաշվարկներով գործարքներ չիրականացնելու մասին:

(6-րդ կետը խմբ. 02.06.11 N 741-Ն, փոփ. 28.04.11 N 636-Ն, 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն)

7. Հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու և լիցենզավորման մասին եզրակացություն տալու նպատակով իրականացվում է ուսումնասիրություն: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրությունները կարող են իրականացվել հայտատուի մոտ:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Լիցենզավորման պարտադիր պահանջները և պայմաններն են՝

1) ներկայացված հայտի (N 1 ձև) ձևի համապատասխանությունը սույն կարգով հաստատված հայտի (N 1 ձև) ձևին և դրանում ներկայացված տեղեկությունների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) հիմնական մանկավարժական կազմի պահանջի մասով՝ մանկավարժական կազմի համապատասխանությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված ՀՀ ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆառակավորման բնութագրերի պահանջներին, մանկավարժական կազմի առնվազն 80%-ի համար տվյալ ուսումնական հաստատությունը հանդիսանում է հիմնական աշխատավայր.

3) ուսումնական տարածքի և լաբորատոր ապահովվածության պահանջի մասով՝

ա. զբաղեցրած ուսումնական տարածքների (այդ թվում՝ դասարան-խաղասենյակի, հանգստի սենյակի, ձեռքի աշխատանքի՝ մոդելավորման, տեխնիկական խաղալիքների և կիրառական արվեստի սենյակի, համապիտանի դասասենյակների՝ երկարօրյա խմբերի համար, մեթոդական կաբինետ-ուսուցչանոցի, հանդիսությունների դահլիճի, մարզադահլիճի), ըստ կրթական ծրագրի, համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 200 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի N 532 և մայիսի 3-ի N 379 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1490-Ն որոշմամբ սահմանված նորմատիվների պահանջներին, ուսումնական տարածքների նկատմամբ իրավունքը (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) հաստատող փաստաթղթերի առկայությունը,

բ. դասասենյակների, դասարան-խաղասենյակների, հանգստի սենյակի, ձեռքի աշխատանքի սենյակի, մարզադահլիճի՝ ուսումնադիդակտիկ պարագաներով, նյութերով, գույքով հագեցվածության համապատասխանությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված չափաքանակների պահանջներին.

4) ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով ուսումնական հաստատության՝

ա. ուսումնական պլանի, ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական ծրագրի համապատասխանությունը ՀՀ կառավարության հաստատած հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին,

բ. սովորողների անձնական գործերի, աշակերտների շարժի մատյանների, աշակերտների հրամանագրքերի, սովորողների ընդունելության, փոխադրման, տեղափոխման կարգերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 1640-Ն, 2011 թվականի հունվարի 18-ի N 23-Ն, 2012 թվականի մայիսի 3-ի N 388-Ն հրամանների պահանջներին.

5) գրադարանային-տեղեկատվական համակարգի պահանջի մասով՝ ուսումնական հաստատությունն իր տարածքի սահմաններում պետք է ապահովված լինի գրադարանային ֆոնդով, որը պետք է հագեցված լինի մեկ սովորողի հաշվարկով յուրաքանչյուր դասագրքից առնվազն 1-ական օրինակ, ինչպես նաև ուսումնադիդակտիկ, ուսումնազննական, մեթոդական, գեղարվեստական, մասնագիտական, տեղեկատվական և այլ գրականությամբ: Ուսումնական հաստատությունը կարող է ունենալ նաև էլեկտրոնային գրականություն.

6) գործունեության իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի առկայությունը, եթե այդ գործունեության մասով հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառումը, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, պարտադիր է:

(8-րդ կետը խմբ. 02.06.11 N 741-Ն, 24.03.11 N 536-Ն, փոփ. 04.06.14 N 588-Ն, խմբ. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

9. Տարրական ընդհանուր կրթական ծրագիր իրականացնելու լիցենզիայի գործողության կասեցումը և դադարեցումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

10. Օրենքներով և սույն կարգով նախատեսված լիցենզիայի պարտադիր պահանջների կամ պայմանների խախտումները վերացնելու մասին համապատասխան հիմնավորող փաստաթղթերը լիցենզավորված անձը ներկայացնում է նախարարություն:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյա**

Հավ N

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱ

_____ -ի

_____ - ի

(հայտատուի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական

ձևը, պետական գրանցման համարը)

_____

(գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mai

_____

(գործունեության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mai

Հ Ա Յ Տ

ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ

NN ը/կ	Կրթական ծրագիրը	Կրթության ձևը	Համակազմի նախատեսվող սահմանային թիվը	Ուսուցման տևողությունը	Ուսուցման լեզուն	Ավարտական փաստաթուղթը	Լիցենզիայի գործողության ժամկետը

_____ _____ __ թ. Դիմող՝ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն, 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

Ձև N

_____ _____ թ

_____

(կազմակերպության անվանումը, գործունեության տեսակը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը)

Տնօրեն _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ

NN ը/կ	Անունը, ազգանունը	Կրթությունը, այն բուհի անվանումը, որն ավարտել է	Որակավո-րումը	Պաշտոնը, դասավանդած առարկան	Աշխատանքը (հիմնական, համատեղությամբ)	Ստաժը (վարչական) մանկավարժական	Տարակարգը

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն)

Ձև N

_____ _____ թ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

Կազմակերպության անվանումը _____

Տնօրենի անունը, ազգանունը _____ _____
(ստորագրությունը)

Գործունեության իրականացման վայրը _____

Շինության տիպը՝ տիպային, հարմարեցված (ընդգծել), այլ

Շինության նկատմամբ իրավունքի տեսակը _____

Շինության ընդհանուր մակերեսը _____ քառ. մետր, որից՝

Անվանումը	Քանակը	Յուրաքանչյուրի մակերեսը (քառ. մետր)	Տարածքի նկատմամբ իրավունքի տեսակը
Դասարան			

Դասարան-խաղասենյակ			
Հանգստի սենյակ			
Ձեռքի աշխատանքի, մոդելավորման, տեխնիկական խաղալիքների և կիրառական արվեստի սենյակ			
Համապիտանի դասասենյակներ (երկարօրյա խմբերի համար)			
Մեթոդական կաբինետ-ուսուցչանոց			
Մարզական դահլիճ			
Հանդիսությունների դահլիճ			
Այլ նշանակության			

Կից ներկայացվում են՝

1) դասարանների, դասարան-խաղասենյակների, հանգստի սենյակի, ձեռքի աշխատանքի սենյակի գույքի, անհրաժեշտ նյութերի, սարքերի ու սարքավորումների ցուցակը.

2) մարզագույքի ցուցակը:

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն)

Ձև N

_____ _____ թ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ

Կազմակերպության անվանումը _____

Գործունեության տեսակը _____

Տնօրեն _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Գրքերի ընդհանուր թիվը _____ , որից՝ դասագրքեր _____,

ծրագրային գեղարվեստական _____ , ուսումնամեթոդական _____ ,

ուսումնաօժանդակ _____ , էլեկտրոնային-տեղեկատվական _____ ,

քարտեզ _____ ,

այլ _____ :

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն)
(հավելվածը փոփ., լրաց. 27.05.10 N 646-Ն, փոփ. 17.02.11 N 140-Ն, խմբ. 02.06.11 N 741-Ն, փոփ. 28.04.11 N 636-Ն, լրաց., փոփ., խմբ. 24.03.11 N 536-Ն, լրաց. 30.08.12 N 1107-Ն, լրաց., փոփ. 04.06.14 N 588-Ն, խմբ. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա

ՏԱՐՐԱԿԱՆ _____ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
(ծրագրի անվանումը)

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա **N 0000**

Սույնով վավերացվում է, որ

_____
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

_____
(գտնվելու վայրը)

_____
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

տարրական _____ **հանրակրթական ծրագիր (ծրագրի անվանումը)**

Նախարար _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ _____ թ

Կ.Տ.

_____

Սերիա 000 N 000000

(հավելվածը փոփ., լրաց. 27.05.10 N 646-Ն, 17.12.20 N 2089-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյա**

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԻՄՆԱԿԱՆ հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան, հիմնակա մասնագիտացված՝ 2-րդ աստիճան, հիմնական հատուկ՝ 2-րդ աստիճան **ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է հիմնական ընդհանուր կրթության բնագավառի ծրագրի իրականացման լիցենզավորման գործընթացը և կարգավորում լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:

2. Հիմնական ընդհանուր կրթական ծրագիր իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում է, դադարեցնում կամ դադարեցման մասին դատարան դիմում է ներկայացնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

(2-րդ կետը փոփ. 17.12.20 N 2089-Ն)

3. Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշումն ընդունվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով: Նման որոշումներն ընդունվում են նախարարության կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունների հիման վրա «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

(3-րդ կետը փոփ. 17.12.20 N 2089-Ն)

4. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի կրթական գործունեության լիցենզավորումն ուսումնական հաստատության հայտի հիման վրա իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Մասնաճյուղի համար լիցենզիան տրվում է մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատությանը:

5. Լիցենզիա տալու մասին որոշումներն ընդունվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան:

5.1. Լիցենզավորված անձանց՝ լիցենզիայի հետ միասին տրամադրվում է լիցենզիայի ներդիր, որը համարվում է լիցենզիայի անբաժանելի մասը: Լիցենզիայի ներդիրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը:

(5.1-ին կետը լրաց. 27.05.10 N 646-Ն, 24.03.11 N 536-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

5.2. Լիցենզավորված անձինք լիցենզավորող մարմին են ներկայացնում լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություն, որի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը: Հաշվետվությունները ներկայացվում են լիցենզիան ստանալու հաջորդ տարվանից՝ տարեկան մեկ անգամ, և դրանք ներկայացնելու ժամկետ է համարվում լիցենզիան ստանալու հաջորդ օրը:

(5.2-րդ կետը լրաց. 30.08.12 N 1107-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

6. Հիմնական հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան, հիմնական մասնագիտացված՝ 2-րդ աստիճան, հիմնական հատուկ՝ 2-րդ աստիճան լիցենզիա ստանալու համար «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի, 28-րդ հոդվածի և «Կրթության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հայտատուն ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) հայտ (ձև N 1), որում նշվում է իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը, իրականացվելիք կրթական ծրագրի անվանումը, կրթության ձևը, տևողությունը, ուսուցման լեզուն, ավարտական փաստաթղթի անվանումը,

սովորողների համար համակազմի նախատեսվող սահմանային թիվը (համակազմի նախատեսվող թիվը հայտատուի կողմից հաշվարկվում է, հաշվի առնելով մեկ սովորողի հաշվով ուսումնական տարածքի նորմատիվների, լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի, գրադարանային-տեղեկատվական համակարգի հագեցվածության չափաքանակները), լիցենզիայի գործողության ժամկետը.

2) ***(ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)***

3)***(ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)***

4) լիցենզավորվող գործունեության տեսակի իրականացման համար նախատեսվող տարածքի նկատմամբ իրավունքի (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) գրանցման վկայականի պատճենը.

5) տեղեկանք մանկավարժական կազմի վերաբերյալ, որտեղ նշվում է մանկավարժների անունը, ազգանունը, կրթությունը, այն բուհի անվանումը, որն ավարտել է, որակավորումը, պաշտոնը, առարկան, որը դասավանդելու է, տեղեկություն աշխատանքի (հիմնական կամ համատեղության) մասին, ստաժը (վարչական/մանկավարժական), տարակարգը (ձև N 2).

6) տեղեկանք հիմնական ընդհանուր կրթական ծրագիր իրականացնելու համար զբաղեցրած տարածքների մակերեսների այդ թվում՝ դասասենյակի, ուսումնական պլանով նախատեսված լաբորատորիայի, առարկայական կաբինետի, արհեստանոցի, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային սենյակի, օժանդակ տարածքների (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) վերաբերյալ (ձև N 3).

7) տեղեկանք ուսումնական գործընթացի գրադարանային-տեղեկատվական ապահովվածության վերաբերյալ (գրադարան, ընթերցասրահ, դասագրքային, էլեկտրոնային-տեղեկատվական) (ձև N 4).

8) կրթական ծրագրի ուսումնական պլանները, առարկայական ծրագրի ցանկը.

9) սովորողների ընդունելության, փոխադրման, ավարտման և քննությունների կազմակերպման կարգերը.

10) կրթական ծրագրերի իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի պատճենը կամ լիցենզավորվող իրավաբանական անձի կողմից տեղեկանք կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցո դրամական հաշվարկներով գործարքներ չիրականացնելու մասին:

(6-րդ կետը խմբ. 02.06.11 N 741-Ն, փոփ. 28.04.11 N 636-Ն, 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն)

7. Հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու և լիցենզավորման մասին եզրակացություն տալու նպատակով իրականացվում է ուսումնասիրություն: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրությունները կարող են իրականացվել հայտատուի մոտ:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Լիցենզավորման պարտադիր պահանջները և պայմաններն են՝

1) ներկայացված հայտի (N 1 ձև) ձևի համապատասխանությունը սույն կարգով հաստատված հայտի (N 1 ձև) ձևին և դրանում ներկայացված տեղեկությունների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) հիմնական մանկավարժական կազմի պահանջի մասով՝ հաստատության մանկավարժական կազմի համապատասխանությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված ՀՀ ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆառակավորման բնութագրերի պահանջներին, և մանկավարժական կազմի առնվազն 80%-ի համար տվյալ ուսումնական հաստատությունը հանդիսանում է հիմնական աշխատավայր.

3) ուսումնական տարածքի և լաբորատոր ապահովվածության պահանջի մասով՝

ա. զբաղեցրած ուսումնական տարածքների (այդ թվում՝ դասասենյակի, ուսումնական պլանով նախատեսված լաբորատորիայի, առարկայական կաբինետի, արհեստանոցի, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային սենյակի, օժանդակ տարածքների (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի N 532 և մայիսի 3-ի N 379 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1490-Ն որոշմամբ սահմանված նորմատիվների պահանջներին, ուսումնական տարածքների նկատմամբ իրավունքը (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) հաստատող փաստաթղթերի առկայությունը,

բ. լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի հագեցվածության համապատասխանությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված չափաքանակների պահանջները բավարարող սարքերով, սարքավորումներով, նյութերով, գույքով.

4) ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով ուսումնական հաստատության՝

ա. ուսումնական պլանը, ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական ծրագրի համապատասխանությունը ՀՀ կառավարության հաստատած հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին,

բ. սովորողների անձնական գործերի, աշակերտների շարժի մատյանների, աշակերտների հրամանագրքերի, շրջանավարտների ավարտական փաստաթղթերի, սովորողների ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտման

և քննությունների կազմակերպման կարգերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունիսի 15-ի N 320 և 2004 թվականի մարտի 31-ի N 414-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հունիսի 22-ի N 609-Ն, 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 1640-Ն, 2011 թվականի հունվարի 18-ի N 23-Ն և 2012 թվականի մայիսի 3-ի N 388-Ն հրամանների պահանջներին.

5) գրադարանային-տեղեկատվական համակարգի պահանջի մասով՝ ուսումնական հաստատությունն իր տարածքի սահմաններում պետք է ապահովված լինի գրադարանային ֆոնդով, որը պետք է հագեցված լինի մեկ սովորողի հաշվարկով յուրաքանչյուր դասագրքից առնվազն 1-ական օրինակ, ինչպես նաև ուսումնադիդակտիկ, ուսումնազննական, մեթոդական, գեղարվեստական, մասնագիտական, տեղեկատվական և այլ գրականությամբ: Ուսումնական հաստատությունը կարող է ունենալ նաև էլեկտրոնային գրականություն.

6) գործունեության իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի առկայությունը, եթե այդ գործունեության մասով հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառումը, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, պարտադիր է:

(8-րդ կետը խմբ. 02.06.11 N 741-Ն, 24.03.11 N 536-Ն, փոփ. 04.06.14 N 588-Ն, խմբ. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

9. Կրթական ծրագրի իրականացման լիցենզիայի գործողության կասեցումը և դադարեցումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

10. Օրենքներով և սույն կարգով նախատեսված լիցենզիայի պարտադիր պահանջների կամ պայմանների խախտումները վերացնելու մասին համապատասխան հիմնավորող փաստաթղթերը լիցենզավորված անձը ներկայացնում է նախարարություն:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյա**

Հավ N

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱ

_____ -ի
_____ - ի
(հայտատուի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական
ձևը, պետական գրանցման համարը)

_____

(գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mai

_____

(գործունեության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mai

Հ Ա Յ Տ

ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ

NN ը/կ	Կրթական ծրագիրը	Կրթության ձևը	Համակազմի նախատեսվող սահմանային թիվը	Ուսուցման տևողությունը	Ուսուցման լեզուն	Ավարտական փաստաթուղթը	Լիցենզիայի գործողության ժամկետը

_____ _____ __ թ. Դիմող՝ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն, 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

Ձև N

_____ _____ թ

_____

(կազմակերպության անվանումը, գործունեության տեսակը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը)

Տնօրեն _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ

NN ը/կ	Անունը, ազգանունը	Կրթությունը, այն բուհի անվանումը, որն ավարտել է	Որակավո-րումը	Պաշտոնը, դասավանդած առարկան	Աշխատանքը (հիմնական, համատեղությամբ)	Ստաժը (վարչական) մանկավարժական	Տարակարգը

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն)

Ձև N

_____ _____ թ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ՇՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

Կազմակերպության անվանումը _____

Տնօրենի անունը, ազգանունը _____ _____
(ստորագրությունը)

Գործունեության իրականացման վայրը _____

Շինության տիպը՝ տիպային, հարմարեցված (ընդգծել), այլ

Շինության նկատմամբ իրավունքի տեսակը _____

Շինության ընդհանուր մակերեսը _____ քառ. մետր, որից՝

Անվանումը	Քանակը	Յուրաքանչյուրի մակերեսը (քառ. մետր)	Տարածքի նկատմամբ իրավունքի տեսակը
Դասասենյակ			
Լաբորատորիա			
Առարկայական կաբինետ			
Արհեստանոց			
Սպորտդահլիճ (մարզադահլիճ)			
Գրադարան-ընթերցասրահ			
Համակարգչային սենյակ			
Օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն)			

Այլ նշանակության			

Կից ներկայացվում են՝
1) լաբորատորիաների, արհեստանոցների գույքի, նյութերի, սարքերի ու սարքավորումների ցուցակը.
2) մարզագույքի ցուցակը:
(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն)

Ձև N

_____ _____ թ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ

Կազմակերպության անվանումը _____

Գործունեության տեսակը _____

Տնօրեն _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Գրքերի ընդհանուր թիվը _____ , որից՝ դասագրքեր _____,

ծրագրային գեղարվեստական _____ , ուսումնամեթոդական _____ ,

ուսումնաօժանդակ _____ , էլեկտրոնային-տեղեկատվական _____ ,

քարտեզ _____ ,

այլ _____ :

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն)
(հավելվածը փոփ., լրաց. 27.05.10 N 646-Ն, փոփ. 17.02.11 N 140-Ն, խմբ. 02.06.11 N 741-Ն, փոփ. 28.04.11 N 636-Ն, լրաց., փոփ., խմբ. 24.03.11 N 536-Ն, լրաց. 30.08.12 N 1107-Ն, լրաց., փոփ. 04.06.14 N 588-Ն, խմբ. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա

ՀԻՄՆԱԿԱՆ _____ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
(ծրագրի անվանումը)

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա **N 0000**

Սույնով վավերացվում է, որ

_____
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

_____
(գտնվելու վայրը)

_____
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Հիմնական _____հանրակրթական ծրագիր
(ծրագրի անվանումը)

Նախարար _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ _____ թ

Կ.Տ.

_____
(լիցենզիայի գործողության ժամկետ

Սերիա 000 N 000000

(հավելվածը փոփ., լրաց. 27.05.10 N 646-Ն, փոփ., լրաց. 17.12.20 N 2089-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյա**

Հավելված N 7
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԻՋՆԱԿԱՐԳ (ԼՐԻՎ) ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ՝ 3-ՐԴ ԱՍՏԻՃԱՆ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ՝ 3-ՐԴ ԱՍՏԻՃԱՆ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՏՈՒԿ՝ 3-ՐԴ ԱՍՏԻՃԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է միջնակարգ հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ միջնակարգ ընդհանուր

3-րդ աստիճան, միջնակարգ մասնագիտացված՝ 3-րդ աստիճան, միջնակարգ հատուկ՝ 3-րդ աստիճան լիցենզավորման գործընթացը և կարգավորում լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:

2. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթական ծրագիր իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում է, դադարեցնում կամ դադարեցման մասին դատարան դիմում է ներկայացնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

(2-րդ կետը փոփ. 17.12.20 N 2089-Ն)

3. Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշումն ընդունվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով: Նման որոշումներն ընդունվում են նախարարության կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունների հիման վրա «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

(3-րդ կետը փոփ. 17.12.20 N 2089-Ն)

4. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի կրթական գործունեության լիցենզավորումն ուսումնական հաստատության հայտի հիման վրա իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Մասնաճյուղի համար լիցենզիան տրվում է մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատությանը:

5. Լիցենզիա տալու մասին որոշումներն ընդունվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան:

5.1. Լիցենզավորված անձանց՝ լիցենզիայի հետ միասին տրամադրվում է լիցենզիայի ներդիր, որը համարվում է լիցենզիայի անբաժանելի մասը: Լիցենզիայի ներդիրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը:

(5.1-ին կետը լրաց. 27.05.10 N 646-Ն, 24.03.11 N 536-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

5.2. Լիցենզավորված անձինք լիցենզավորող մարմին են ներկայացնում լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություն, որի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը: Հաշվետվությունները ներկայացվում են լիցենզիան ստանալու հաջորդ տարվանից՝ տարեկան մեկ անգամ, և դրանք ներկայացնելու ժամկետ է համարվում լիցենզիան ստանալու հաջորդ օրը:

(5.2-րդ կետը լրաց. 30.08.12 N 1107-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

6. Միջնակարգ հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ միջնակարգ ընդհանուր՝ 3-րդ աստիճան, միջնակարգ մասնագիտացված՝ 3-րդ աստիճան, միջնակարգ հատուկ՝ 3-րդ աստիճան լիցենզիա ստանալու համար «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի, 28-րդ հոդվածի և «Կրթության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հայտատուն ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) հայտ (ձև N 1), որում նշվում է իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը, իրականացվելիք կրթական ծրագրի անվանումը, կրթության ձևը, տևողությունը, ուսուցման լեզուն, ավարտական փաստաթղթի անվանումը, սովորողների համակազմի նախատեսվող սահմանային թիվը (համակազմի նախատեսվող սահմանային թիվը հայտատուի կողմից հաշվարկվում է, հաշվի առնելով մեկ սովորողի հաշվով ուսումնական տարածքի նորմատիվների, լաբորատորիաների արհեստանոցների, մարզադահլիճի, գրադարանային-տեղեկատվական համակարգի հագեցվածության չափաքանակները), լիցենզիայի գործողության ժամկետը.

2) ***(ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)***

3) ***(ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)***

4) լիցենզավորվող գործունեության տեսակի իրականացման համար նախատեսվող տարածքի նկատմամբ իրավունքի (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) գրանցման վկայականի պատճենը.

5) տեղեկանք մանկավարժական կազմի վերաբերյալ, որտեղ նշվում է մանկավարժների անունը, ազգանունը, կրթությունը, այն ուսումնական հաստատության անվանումը, որն ավարտել է, որակավորումը, պաշտոնը, առարկան, որը դասավանդելու է, տեղեկություն աշխատանքի հիմնական կամ համատեղության մասին, ստաժը (վարչական/մանկավարժական), տարակարգը (ձև N 2).

6) տեղեկանք միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթական ծրագիր իրականացնելու համար զբաղեցրած տարածքների մակերեսների, այդ թվում՝ դասասենյակի, լաբորատորիայի, առարկայական կաբինետի, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային սենյակի, արհեստանոցի, օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) տարածքների վերաբերյալ (ձև N 3).

7) տեղեկանք ուսումնական գործընթացի գրադարանային-տեղեկատվական ապահովվածության վերաբերյալ (գրադարան, ընթերցասրահ, դասագրքային, էլեկտրոնային-տեղեկատվական) (ձև N 4).

8) կրթական ծրագրի ուսումնական պլանները, առարկայական ծրագրի ցանկը.

9) սովորողների ընդունելության, փոխադրման, ավարտման և քննությունների կազմակերպման կարգերը.

10) կրթական ծրագրերի իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի

պատճենը կամ լիցենզավորվող իրավաբանական անձի կողմից տեղեկանք կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցո դրամական հաշվարկներով գործարքներ չիրականացնելու մասին:

(6-րդ կետը խմբ. 02.06.11 N 741-Ն, փոփ. 28.04.11 N 636-Ն, 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն)

7. Հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու և լիցենզավորման մասին եզրակացություն տալու նպատակով իրականացվում է ուսումնասիրություն: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրությունները կարող են իրականացվել հայտատուի մոտ:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Լիցենզավորման պարտադիր պահանջները և պայմաններն են՝

1) ներկայացված հայտի (N 1 ձև) ձևի համապատասխանությունը սույն կարգով հաստատված հայտի (N 1 ձև) ձևին և դրանում ներկայացված տեղեկությունների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) հիմնական մանկավարժական կազմի պահանջի մասով՝ մանկավարժական կազմի համապատասխանությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված ՀՀ ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆառրակավորման բնութագրերի պահանջներին, մանկավարժական կազմի առնվազն 80%-ի համար տվյալ ուսումնական հաստատությունը հանդիսանում է հիմնական աշխատավայր.

3) ուսումնական տարածքի և լաբորատոր ապահովվածության պահանջի մասով.

ա. զբաղեցրած ուսումնական տարածքների (այդ թվում՝ դասասենյակի, լաբորատորիայի, առարկայական կաբինետի, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային սենյակի, արհեստանոցի, օժանդակ (բակ, մարզահրապարակ պահեստային մակերես և այլ տարածքներ), ըստ կրթական ծրագրի, համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի N 532 և մայիսի 3-ի N 379 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1490-Ն որոշմամբ սահմանված նորմատիվների պահանջներին, ուսումնական տարածքների նկատմամբ իրավունքը (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) հաստատող փաստաթղթերի առկայությունը,

բ. լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի սարքերով, սարքավորումներով, նյութերով, գույքով հագեցվածության համապատասխանությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատած չափաքանակների պահանջներին.

4) ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով ուսումնական հաստատության՝

ա. ուսումնական պլանի, ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական ծրագրի համապատասխանությունը ՀՀ կառավարության հաստատած հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին,

բ. սովորողների անձնական գործերի, աշակերտների շարժի մատյանների, աշակերտների հրամանագրքերի, շրջանավարտների ավարտական փաստաթղթերի, սովորողների ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտման և քննությունների կազմակերպման կարգերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունիսի 15-ի N 320 և 2004 թվականի մարտի 31-ի N 414-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հունիսի 22-ի N 609-Ն, 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 1640-Ն, 2011 թվականի հունվարի 18-ի N 23-Ն և 2012 թվականի մայիսի 3-ի N 388-Ն հրամանների պահանջներին.

5) գրադարանային-տեղեկատվական համակարգի պահանջի մասով՝ ուսումնական հաստատությունն իր տարածքի սահմաններում պետք է ապահովված լինի գրադարանային ֆոնդով, որը պետք է հագեցված լինի մեկ սովորողի հաշվարկով յուրաքանչյուր դասագրքից առնվազն 1-ական օրինակ, ինչպես նաև ուսումնադիդակտիկ, ուսումնազննական, մեթոդական, գեղարվեստական, մասնագիտական, տեղեկատվական և այլ գրականությամբ: Ուսումնական հաստատությունը կարող է ունենալ նաև էլեկտրոնային գրականություն.

6) գործունեության իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի առկայությունը, եթե այդ գործունեության մասով հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառումը, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, պարտադիր է:

(8-րդ կետը խմբ. 02.06.11 N 741-Ն, 24.03.11 N 536-Ն, փոփ. 04.06.14 N 588-Ն, խմբ. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

9. Կրթական ծրագրի իրականացման լիցենզիայի գործողության կասեցումը և դադարեցումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

10. Օրենքներով և սույն կարգով նախատեսված լիցենզիայի պարտադիր պահանջների կամ պայմանների խախտումները վերացնելու մասին համապատասխան հիմնավորող փաստաթղթերը լիցենզավորված անձը ներկայացնում է նախարարություն:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյա**

Ձև N

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱ

_____ -ի
_____ - ի
(հայտատուի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական
ձևը, պետական գրանցման համարը)

_____

(գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mai
_____
(գործունեության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mai

Հ Ա Յ Տ

ՄԻՋՆԱԿԱՐԳ (ԼՐԻՎ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ

NN ը/կ	Կրթական ծրագիրը	Կրթության ձևը	Համակազմի նախատեսվող սահմանային թիվը	Ուսուցման տևողությունը	Ուսուցման լեզուն	Ավարտական փաստաթուղթը	Լիցենզիայի գործողության ժամկետը

_____ _____ __ թ. Դիմող՝ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն, 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

Ձև N

_____ _____ Թ

_____
(կազմակերպության անվանումը, գործունեության տեսակը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը)

_____

Տնօրեն _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ

NN ը/կ	Անունը, ազգանունը	Կրթությունը, այն բուհի անվանումը, որն ավարտել է	Որակավո-րումը	Պաշտոնը, դասավանդած առարկան	Աշխատանքը (հիմնական, համատեղությամբ)	Ստաժը (վարչական) մանկավարժական	Տարակարգը

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն)

Ձև N

_____ _____ Թ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՄԻՋՆԱԿԱՐԳ (ԼՐԻՎ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

Կազմակերպության անվանումը _____

Տնօրենի անունը, ազգանունը _____ _____

(ստորագրությունը)

Գործունեության իրականացման վայրը _____

Շինության տիպը՝ տիպային, հարմարեցված (ընդգծել), այլ

Շինության նկատմամբ իրավունքի տեսակը _____

Շինության ընդհանուր մակերեսը _____ քառ. մետր, որից՝

Անվանումը	Քանակը	Յուրաքանչյուրի մակերեսը (քառ. մետր)	Տարածքի նկատմամբ իրավունքի տեսակը
Դասասենյակ			
Լաբորատորիա			
Առարկայական կաբինետ			
Սպորտդահլիճ (մարզադահլիճ)			
Գրադարան-ընթերցասրահ			
Համակարգչային սենյակ			
Արհեստանոց			
Օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն)			
Այլ նշանակության			

Կից ներկայացվում են՝
1) լաբորատորիաների, արհեստանոցների գույքի, նյութերի, սարքերի ու սարքավորումների ցուցակը.
2) մարզագույքի ցուցակը:
(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն)

Ձև N

_____ _____ թ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ

Կազմակերպության անվանումը _____

Գործունեության տեսակը _____

Տնօրեն _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Գրքերի ընդհանուր թիվը _____ , որից՝ դասագրքեր _____,

ծրագրային գեղարվեստական _____ , ուսումնամեթոդական _____ ,

ուսումնաօժանդակ _____ , էլեկտրոնային-տեղեկատվական _____ ,

քարտեզ _____ ,

այլ _____ :

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն)
(հավելվածը փոփ., լրաց. 27.05.10 N 646-Ն, փոփ. 17.02.11 N 140-Ն, խմբ. 02.06.11 N 741-Ն, փոփ. 28.04.11 N 636-Ն, լրաց., փոփ., խմբ. 24.03.11 N 536-Ն, լրաց. 30.08.12 N 1107-Ն, լրաց., փոփ. 04.06.14 N 588-Ն, խմբ. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

Հավելված N 8
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա

ՄԻՋՆԱԿԱՐԳ _____ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
(ծրագրի անվանումը)

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա **N 0000**

Սույնով վավերացվում է, որ

_____
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

_____
(գտնվելու վայրը)

_____
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Միջնակարգ _____հանրակրթական ծրագիր

(ծրագրի անվանումը)

Նախարար _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ _____ թ

Կ.Տ.

_____

(լիցենզիայի գործողության ժամկետ

Սերիա 000 N 000000

(հավելվածը փոփ., լրաց. 27.05.10 N 646-Ն, փոփ., լրաց. 17.12.20 N 2089-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյա**

Հավելված N 9
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՏՈՒԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

(հավելվածն ուժը կորցրել է 27.05.10 N 646-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյա**

Հավելված N 10
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա

ՀԱՏՈՒԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

(հավելվածն ուժը կորցրել է 27.05.10 N 646-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյա**

Հավելված N 11
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

(վերնագիրը լրաց. 19.08.10 N 1049-Ն, փոփ. 04.06.14 N 588-Ն)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման գործընթացը և կարգավորում լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:

(1-ին կետը լրաց. 19.08.10 N 1049-Ն, փոփ. 04.06.14 N 588-Ն)

2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում է, դադարեցնում կամ դադարեցման մասին դատարան դիմում է ներկայացնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

(2-րդ կետը լրաց. 19.08.10 N 1049-Ն, փոփ. 04.06.14 N 588-Ն, 17.12.20 N 2089-Ն)

3. Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու և մասնագիտությունների գծով՝ ընդունելության սահմանային տեղերի թվի փոփոխության, ըստ ուսուցման ձևերի, կրթության հիմքերի, որակավորման աստիճանների, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների օտար լեզվով ուսուցում իրականացնելու գործունեության թույլտվության) մասին որոշումն ընդունվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով: Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշումներն ընդունվում են նախարարության կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունների հիման վրա «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

(3-րդ կետը լրաց., փոփ. 27.05.10 N 646-Ն, լրաց. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

4. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի կրթական գործունեության լիցենզավորումն ուսումնական հաստատության հայտի հիման վրա իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Մասնաճյուղի համար լիցենզիան տրվում է մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատությանը:

5. Լիցենզիա տալու մասին որոշումներն ընդունվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան:

5.1. Լիցենզավորված անձանց՝ լիցենզիայի հետ միասին տրամադրվում է լիցենզիայի ներդիր, որը համարվում է լիցենզիայի անբաժանելի մասը: Լիցենզիայի ներդիրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը:

(5.1-ին կետը լրաց. 27.05.10 N 646-Ն, 24.03.11 N 536-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

5.2. Լիցենզավորված անձինք լիցենզավորող մարմին են ներկայացնում լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություն, որի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը: Հաշվետվությունները ներկայացվում են լիցենզիան ստանալու հաջորդ տարվանից՝ տարեկան մեկ անգամ, և դրանք ներկայացնելու ժամկետ է համարվում լիցենզիան ստանալու հաջորդ օրը:

(5.2-րդ կետը լրաց. 30.08.12 N 1107-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ստանալու համա «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի, 28-րդ հոդվածի և «Կրթության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հայտատուն ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) հայտ (ձև N 1), որում նշվում է իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու և գործունեության իրականացման, բացառությամբ բժշկական նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի վայրերը, հեռախոսահամարը, իրականացվելիք կրթական ծրագրի անվանումը, կրթության ձևը, տևողությունը, ուսուցման լեզուն, ուսուցման ավարտին տրվող որակավորումը, ավարտական փաստաթղթի անվանումը, սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի, (սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի հայտատուի կողմից հաշվարկվում է՝ հաշվի առնելով մեկ սովորողի հաշվով ուսումնական տարածքի նորմատիվների, լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի, իսկ բժշկական կրթական ծրագրերի մասով նաև վիվարիումի, կլինիկական ամբիոնի (բազայի), գրադարանային-տեղեկատվական համակարգի հագեցվածության

չափաքանակները, ուսումնաարտադրական պրակտիկայի բազան), լիցենզիայի գործողության ժամկետը.

2) ***(ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)***

3) ***(ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)***

4) լիցենզավորվող գործունեության տեսակի իրականացման, բացառությամբ բժշկական նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի համար նախատեսվող տարածքի նկատմամբ իրավունքի (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) գրանցման վկայականի պատճենը.

5) տեղեկանք մանկավարժական, դասախոսական և արտադրական ուսուցման վարպետների կազմի վերաբերյալ, որտեղ նշվում է մանկավարժների, դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների անունը, ազգանունը, կրթությունը, այն ուսումնական հաստատության անվանումը, որն ավարտել է, պաշտոնը, առարկան, որը դասավանդելու է, տեղեկություն աշխատանքի հիմնական կամ համատեղության մասին, ստաժը (վարչական/մանկավարժական), տարակարգը (ձև N 2).

6) տեղեկանք նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնելու համար զբաղեցրած տարածքների, այդ թվում՝ դասասենյակի, լաբորատորիայի, արհեստանոցի, առարկայական կաբինետի, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային սենյակի, օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) տարածքների (ձև N 3).

7) տեղեկանք ուսումնական գործընթացի գրադարանային-տեղեկատվական ապահովվածության վերաբերյալ (գրադարան, ընթերցասրահ, դասագրքային, էլեկտրոնային-տեղեկատվական) (ձև N 4).

8) տեղեկանք ուսումնական և արտադրական, իսկ բժշկական կրթական ծրագրերի համար կլինիկական պրակտիկայի ապահովվածության վերաբերյալ, ընդ որում, սեփական կլինիկական բազաների բացակայության դեպքում ներկայացվում է համապատասխան այլ բազաներից օգտվելու մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրերի պատճենները.

9) կրթական ծրագրերի մասնագիտությունների ուսումնական պլանը, առարկայական ծրագրերի ցանկը.

10) սովորողների ընդունելության, փոխադրման, տեղափոխման ավարտական ամփոփիչ ատեստավորման (քննությունների) կարգերը.

11) կրթական ծրագրերի իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի պատճենը կամ լիցենզավորվող իրավաբանական անձի կողմից տեղեկանք կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցո դրամական հաշվարկներով գործարքներ չիրականացնելու մասին:

(6-րդ կետը լրաց. 19.08.10 N 1049-Ն, խմբ. 02.06.11 N 741-Ն, փոփ. 28.04.11 N 636-Ն, 24.03.11 N 536-Ն, փոփ., լրաց., խմբ. 04.06.14 N 588-Ն)

7. Սույն կարգի 7-րդ կետով նախատեսված լիցենզիայի պայմաններին և պահանջներին հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու և լիցենզավորման մասին եզրակացություն տալու նպատակով իրականացվում է ուսումնասիրություն: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրությունները կարող են իրականացվել հայտատուի մոտ:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Լիցենզավորման պարտադիր պահանջներն ու պայմաններն են՝

1) ներկայացված հայտի (N 1 ձև) ձևի համապատասխանությունը սույն կարգով հաստատված հայտի (N 1 ձև) ձևին և դրանում ներկայացված տեղեկությունների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) հիմնական մանկավարժական, դասախոսական և արտադրական ուսուցման վարպետների կազմի պահանջի մասով՝ հաստատության մանկավարժական, դասախոսական և արտադրական ուսուցման վարպետների կազմի համապատասխանությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված՝ ՀՀ ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆառրակավորման բնութագրերի պահանջներին, մանկավարժական կազմի առնվազն 80%-ի համար տվյալ ուսումնական հաստատությունը հանդիսանում է հիմնական աշխատավայր, իսկ օտար լեզուներով ուսուցում կազմակերպող ուսումնական հաստատությունը՝ տվյալ մասնագիտությամբ դասավանդվող հիմնական առարկաների գծով ապահովում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1295-Ն որոշման հավելվածի 20-րդ կետի պահանջները.

3) ուսումնական տարածքի և լաբորատոր բազայի ապահովվածության պահանջի մասով՝

ա. զբաղեցրած ուսումնական տարածքների (այդ թվում՝ դասասենյակի, լաբորատորիայի, արհեստանոցի, առարկայակա կաբինետի, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային սենյակի, օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվական դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինման ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի N 532 և մայիսի 3-ի N 379 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1490-Ն որոշմամբ սահմանված նորմատիվների պահանջներին, ուսումնական տարածքների նկատմամ իրավունքը (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) հաստատող փաստաթղթերի առկայությունը,

բ. լաբորատորիաները, արհեստանոցները, մարզադահլիճը հագեցվածության համապատասխանությունը ՀՀ կրթության,

գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատած չափաքանակների պահանջներին: Հեռավար ձևով կրթություն կազմակերպելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ հաստատված Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) ուսուցման կարգին համապատասխան ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ էլեկտրոնային կապի միջոցների և անհրաժեշտ այլ սարքավորումների առկայությունը.

գ. բժշկական կրթական ծրագրերի մասով նաև՝ կլինիկական ամբիոնի (բազայի) գործող լիցենզիաների պատճենների առկայությունը.

4) ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով ուսումնական հաստատության՝

ա. ըստ կրթության ձևերի ուսումնական պլանի, ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական ծրագրերի համապատասխանությունը նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության պետական չափորոշչի պահանջներին,

բ. քննական թերթերի և տեղեկագրերի, շրջանավարտների ավարտական փաստաթղթերի, սովորողների ընդունելության, վերականգնման, քննությունների անցկացման կարգի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունիսի 15-ի N 320 որոշման, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի հուլիսի 21-ի N 638-Ն, 2010 թվականի հունիսի 22-ի N 609-Ն, 2011 թվականի դեկտեմբերի 5-ի N 1278-Ն, 2012 թվականի ապրիլի 5-ի N 254-Ն հրամանների պահանջներին.

գ. օտարերկրացիների համար օտար լեզուներով ուսուցում կազմակերպելու դեպքում հաստատության կողմից իրականացվող համապատասխան օտար լեզվով ուսումնական ծրագրերի և պլանների առկայությունը.

5) գրադարանային-տեղեկատվական համակարգի պահանջի մասով՝ ուսումնական հաստատությունն իր տարածքի սահմաններում պետք է ապահովված լինի գրադարանային ֆոնդով, որը պետք է ներառի մասնագիտական և գեղարվեստական գրականություն, ուսումնամեթոդական ձեռնարկներ, ցուցադրական, աուդիո-վիդեո և մուլտիմեդիա ուսումնական նյութեր, իսկ օտարերկրացիների համար օտար լեզուներով ուսուցում կազմակերպելու դեպքում՝ նաև օտարալեզու մասնագիտական արդիական գրականությամբ: Ուսումնական հաստատությունը կարող է ունենալ նաև էլեկտրոնային գրականություն.

6) ուսումնաարտադրական և կլինիկական պրակտիկայի բազայի մասով՝ համապատասխան բնագավառի բազային հաստատությունների հետ կնքված պայմանագրերի (պրակտիկա անցնողների քանակի նշումով) առկայությունը.

7) գործունեության իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի առկայությունը, եթե այդ գործունեության մասով հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառումը, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, պարտադիր է:

(8-րդ կետը խմբ. 02.06.11 N 741-Ն, 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն, լրաց., խմբ. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

9. Կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի գործողության կասեցումը և դադարեցումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

10. Օրենքներով և սույն կարգով նախատեսված լիցենզիայի պարտադիր պահանջների կամ պայմանների խախտումները վերացնելու մասին համապատասխան հիմնավորող փաստաթղթերը լիցենզավորված անձը ներկայացնում է նախարարություն:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյա**

Ձև N

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱ

_____ -ի
_____ - ի
(հայտատուի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական
ձևը, պետական գրանցման համարը)

_____
(գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mai

_____

(գործունեության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mai

Հ Ա Յ Տ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ

NN ը/կ	Դասիչը	Մասնագի-տությունը	Կրթու-թյան ձևը	Սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի					Ուսուցման լեզուն	Ուսուցման տևողու-թյունը	Ուսուցման ավարտին տրվող որակավորումը	Ավարտական փաստաթուղթը	Լիցենզիայի գործողությա ժամկետը
				1	2	3	4	5					

Կ.Տ.

_____ _____ __ թ. Դիմող՝ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(ձևը փոփ. 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

Ձև N

_____ _____ թ

_____

(կազմակերպության անվանումը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը)

Կ.Տ

Տնօրեն (ռեկտոր) _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ

NN ը/կ	Անունը, ազգանունը	Կրթությունը, այն բուհի անվանումը, որն ավարտել է	Որակավո-րումը	Պաշտոնը, դասավանդած առարկան	Աշխատանքը (հիմնական, համատեղությամբ)	Ստաժը (վարչական) մանկավարժական	Տարակարգը

Հև N

_____ _____ Ի

Կ.Տ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

Կազմակերպության անվանումը _____

Տնօրենի անունը, ազգանունը _____ _____
(ստորագրությունը)

Գործունեության իրականացման վայրը _____

Շինության տիպը՝ տիպային, հարմարեցված (ընդգծել), այլ

Շինության նկատմամբ իրավունքի տեսակը _____

Շինության ընդհանուր մակերեսը _____ քառ. մետր, որից՝

Անվանումը	Քանակը	Յուրաքանչյուրի մակերեսը (քառ. մետր)	Տարածքի նկատմամբ իրավունքի տեսակը
Դասասենյակ			
Լաբորատորիա			
Վիվարիում			
Կլինիկական ամբիոն (բազա)			
Առարկայական կաբինետ			
Արհեստանոց			
Սպորտդահլիճ (մարզադահլիճ)			
Գրադարան - ընթերցասրահ			
Համակարգչային սենյակ			
Օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն)			
Այլ նշանակության			

Կից ներկայացվում են՝

1) լաբորատորիաների, արհեստանոցների, գույքի, նյութերի, սարքերի ու սարքավորումների վիվարիումի, կլինիկական ամբիոնի (բազա) հագեցվածության ցուցակը.

2) մարզագույքի ցուցակը:

(ձևը լրաց. 04.06.14 N 588-Ն)

Ձև N

_____ _____ թ

Կ.Տ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ

Կազմակերպության անվանումը _____

Տնօրեն _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Գրքերի ընդհանուր թիվը _____ , որից՝ դասագրքեր _____,

ծրագրային գեղարվեստական _____ , ուսումնամեթոդական _____ ,

ուսումնաօժանդակ _____ , էլեկտրոնային-տեղեկատվական _____ ,

քարտեզ _____ ,

այլ _____ :

(հավելվածը լրաց., փոփ. 27.05.10 N 646-Ն, լրաց. 19.08.10 N 1049-Ն, խմբ. 02.06.11 N 741-Ն, փոփ. 28.04.11 N 636-Ն, լրաց., փոփ., խմբ. 24.03.11 N 536-Ն, լրաց. 30.08.12 N 1107-Ն, փոփ., լրաց., խմբ. 04.06.14 N 588-Ն, լրաց., խմբ. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

Հավելված N 12
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա **N 0000**

Սույնով վավերացվում է, որ

_____
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

_____
(գտնվելու վայրը)

_____
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր

Նախարար _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ _____ թ

Կ.Տ.

_____
(լիցենզիայի գործողության ժամկետ

Սերիա 000 N 000000

(հավելվածը լրաց. 30.08.12 N 1107-Ն, փոփ., լրաց. 17.12.20 N 2089-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյա**

Հավելված N 13
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

(վերնագիրը փոփ. 04.06.14 N 588-Ն)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման գործընթացը և կարգավորում լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:

2. Միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում է, դադարեցնում կամ դադարեցման մասին դատարան դիմում է ներկայացնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

(2-րդ կետը փոփ. 17.12.20 N 2089-Ն)

3. Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու և մասնագիտությունների գծով՝ ընդունելության սահմանային տեղերի թվի փոփոխության, ըստ ուսուցման ձևերի, կրթության հիմքերի, որակավորման աստիճանների, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների օտար լեզվով ուսուցում իրականացնելու գործունեության թույլտվության) մասին որոշումն ընդունվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով: Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշումներն ընդունվում են նախարարության կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունների հիման վրա:

(3-րդ կետը լրաց., փոփ. 27.05.10 N 646-Ն, լրաց. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

4. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի կրթական գործունեության լիցենզավորումն ուսումնական հաստատության հայտի հիման վրա իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Մասնաճյուղի համար լիցենզիան տրվում է մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատությանը:

5. Լիցենզիա տալու մասին որոշումներն ընդունվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան:

5.1. Լիցենզավորված անձանց՝ լիցենզիայի հետ միասին տրամադրվում է լիցենզիայի ներդիր, որը համարվում է լիցենզիայի անբաժանելի մասը: Լիցենզիայի ներդիրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը:

(5.1-ին կետը լրաց. 27.05.10 N 646-Ն, 24.03.11 N 536-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

5.2. Լիցենզավորված անձինք լիցենզավորող մարմին են ներկայացնում լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություն, որի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը: Հաշվետվությունները ներկայացվում են լիցենզիան ստանալու հաջորդ տարվանից՝ տարեկան մեկ անգամ, և դրանք ներկայացնելու ժամկետ է համարվում լիցենզիան ստանալու հաջորդ օրը:

(5.2-րդ կետը լրաց. 30.08.12 N 1107-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

6. Միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ստանալու համար «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի, 28-րդ հոդվածի և «Կրթության մասին» ՀՀ օրենքի 41-րդ

հոդվածի պահանջներին համապատասխան՝ հայտատուն ներկայացնում է հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

1) հայտ (ձև N 1), որում նշվում է իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը, իրականացվելիք կրթական ծրագրի անվանումը, կրթության ձևը, տևողությունը, ուսուցման լեզուն, ուսուցման ավարտին տրվող որակավորումը, ավարտական փաստաթղթի անվանումը, սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի (սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի հայտատուի կողմից հաշվարկվում է՝ հաշվի առնելով մեկ սովորողի հաշվու ուսումնական տարածքի նորմատիվների, լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի, իսկ բժշկական կրթական ծրագրերի մասով նաև վիվարիումի, կլինիկական ամբիոնի (բազայի), գրադարանային-տեղեկատվական համակարգի հագեցվածության չափաքանակները, ուսումնաարտադրական պրակտիկայի բազան), լիցենզիայի գործողության ժամկետը.

2) ***(ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)***

3) ***(ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)***

4) լիցենզավորվող գործունեության տեսակի իրականացման համար նախատեսվող տարածքի նկատմամբ իրավունքի (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) գրանցման վկայականի պատճենը.

5) տեղեկանք դասախոսական կազմի վերաբերյալ, որտեղ նշվում է դասախոսների անունը, ազգանունը, կրթությունը, ավարտած ուսումնական հաստատությունը, որակավորումը, պաշտոնը, առարկան, որը դասավանդելու է, տեղեկություն աշխատանքի հիմնական կամ համատեղության մասին, ստաժը (վարչական/մանկավարժական), տարակարգը (ձև N 2).

6) տեղեկանք միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելու համար զբաղեցրած տարածքների, այդ թվում դասասենյակի, լաբորատորիայի, արհեստանոցի, առարկայական կաբինետի, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային սենյակի, օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) տարածքների (ձև N 3).

7) տեղեկանք ուսումնական գործընթացի գրադարանային-տեղեկատվական ապահովվածության վերաբերյալ (գրադարան, ընթերցասրահ, դասագրքային, էլեկտրոնային-տեղեկատվական) (ձև N 4).

8) տեղեկանք ուսումնական և արտադրական, իսկ բժշկական կրթական ծրագրերի մասով՝ կլինիկական պրակտիկայի ապահովվածության վերաբերյալ.

9) կրթական ծրագրերի մասնագիտությունների ուսումնական պլանը, առարկայական ծրագրերի ցանկը.

10) սովորողների ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտական ամփոփիչ ատեստավորման (քննությունների) կարգերը.

11) կրթական ծրագրերի իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի պատճենը կամ լիցենզավորվող իրավաբանական անձի կողմից տեղեկանք կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցո դրամական հաշվարկներով գործարքներ չիրականացնելու մասին:

(6-րդ կետը խմբ. 02.06.11 N 741-Ն, փոփ. 28.04.11 N 636-Ն, 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն)

7. Հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու և լիցենզավորման մասին եզրակացություն տալու նպատակով իրականացվում է ուսումնասիրություն: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրությունները կարող են իրականացվել հայտատուի մոտ:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Լիցենզավորման պարտադիր պահանջներն ու պայմաններն են՝

1) ներկայացված հայտի (N 1 ձև) ձևի համապատասխանությունը սույն կարգով հաստատված հայտի (N 1 ձև) ձևին և դրանում ներկայացված տեղեկությունների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) հիմնական մանկավարժական և դասախոսական կազմի պահանջի մասով՝ դասախոսական կազմի համապատասխանությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված՝ պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջներին, հաստատության դասախոսական կազմի և արտադրակա ուսուցման վարպետների 80%-ի համար տվյալ ուսումնական հաստատությունը հանդիսանում է հիմնական աշխատավայր, իսկ օտար լեզուներով ուսուցում կազմակերպող ուսումնական հաստատությունը՝ տվյալ մասնագիտությամբ դասավանդվող հիմնական առարկաների գծով ապահովում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1295-Ն որոշման հավելվածի 20-րդ կետի պահանջները.

3) ուսումնական տարածքի և լաբորատոր ապահովվածության պահանջի մասով՝

ա. զբաղեցրած ուսումնական տարածքների (այդ թվում՝ դասասենյակի, լաբորատորիայի, արհեստանոցի, առարկայակա կաբինետի, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային սենյակի, օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվական դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինման ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի N 532 և մայիսի 3-ի N 379 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1490-Ն որոշմամբ սահմանված նորմատիվների պահանջներին, ուսումնական տարածքների նկատմամ իրավունքը (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) հաստատող փաստաթղթերի առկայությունը,

բ. լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի հագեցվածության համապատասխանությունը ՀՀ կրթության,

գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատած չափաքանակների պահանջներին: Հեռավար ձևով կրթություն կազմակերպելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ հաստատված Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) ուսուցման կարգին համապատասխան ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ էլեկտրոնային կապի միջոցների և անհրաժեշտ այլ սարքավորումների առկայությունը.

գ. բժշկական կրթական ծրագրերի մասով նաև կլինիկական ամբիոնի (բազայի) գործող լիցենզիաների պատճենների առկայությունը.

4) ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով ուսումնական հաստատության՝

ա. ըստ կրթության ձևի ուսումնական պլանի, ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական ծրագրերի համապատասխանությունը միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր և մասնագիտությունների պետական չափորոշիչների պահանջներին,

բ. քննական թերթերի և տեղեկագրերի, շրջանավարտների ավարտական փաստաթղթերի, սովորողների ընդունելության, վերականգնման, քննությունների անցկացման կարգի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունիսի 15-ի N 320 որոշման, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի հուլիսի 21-ի N 638-Ն, 2010 թվականի հունիսի 22-ի N 609-Ն, 2011 թվականի դեկտեմբերի 5-ի N 1278-Ն, 2012 թվականի ապրիլի 5-ի N 254-Ն հրամանների պահանջներին.

գ. օտարերկրացիների համար օտար լեզուներով ուսուցում կազմակերպելու դեպքում հաստատության կողմից իրականացվող համապատասխան օտար լեզվով ուսումնական ծրագրերի և պլանների առկայությունը.

5) գրադարանային-տեղեկատվական համակարգի պահանջի մասով՝ ուսումնական հաստատությունն իր տարածքի սահմաններում պետք է ապահովված լինի գրադարանային ֆոնդով, որը պետք է ներառի մասնագիտական և գեղարվեստական գրականություն, ուսումնամեթոդական ձեռնարկներ, ցուցադրական, աուդիո-վիդեո և մուլտիմեդիա ուսումնական նյութեր, իսկ օտարերկրացիների համար օտար լեզուներով ուսուցում կազմակերպելու դեպքում՝ նաև օտարալեզու մասնագիտական արդիական գրականությամբ: Ուսումնական հաստատությունը կարող է ունենալ նաև էլեկտրոնային գրականություն.

6) ուսումնաարտադրական կամ կլինիկական պրակտիկայի բազայի մասով բնագավառի բազային հաստատությունների հետ կնքված պայմանագրերի (պրակտիկա անցնողների քանակի նշումով) առկայությունը.

7) գործունեության իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի առկայությունը, եթե այդ գործունեության մասով հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառումը, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, պարտադիր է:

(8-րդ կետը խմբ. 02.06.11 N 741-Ն, 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն, լրաց., խմբ. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

9. Միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի գործողության կասեցումը և դադարեցումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

10. Օրենքներով և սույն կարգով նախատեսված լիցենզիայի պարտադիր պահանջների կամ պայմանների խախտումները վերացնելու մասին համապատասխան հիմնավորող փաստաթղթերը լիցենզավորված անձը ներկայացնում է նախարարություն:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյա**

Ձև N

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱ

_____ -ի
_____ - ի
(հայտատուի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական
ձևը, պետական գրանցման համարը)

_____
(գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mai

_____

(գործունեության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mai

Հ Ա Յ Տ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ

NN ը/կ	Դասիչը	Մասնագի-տությունը	Կրթու-թյան ձևը	Սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի					Ուսուցման լեզուն	Ուսուցման տևողու-թյունը	Ուսուցման ավարտին տրվող որակավորումը	Ավարտական փաստաթուղթը	Լիցենզիայի գործողության ժամկետը
				1	2	3	4	5					

_____ _____ __ թ. Դիմող՝ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն, 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

Ձև N

_____ _____ թ

_____

(կազմակերպության անվանումը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը)

Տնօրեն (ռեկտոր) _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ

NN ը/կ	Անունը, ազգանունը	Կրթությունը, բուհը ավարտած	Որակավո-րումը	Պաշտոնը, դասավանդած առարկան	Աշխատանքը (հիմնական, համատեղությամբ)	Ստաժը (վարչական) մանկավարժական	Տարակարգը

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն)

Ձև N

_____ _____ թ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱ
ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

Կազմակերպության անվանումը _____

Տնօրենի անունը, ազգանունը _____ _____
(ստորագրությունը)

Գործունեության իրականացման վայրը _____

Շինության տիպը՝ տիպային, հարմարեցված (ընդգծել), այլ

Շինության նկատմամբ իրավունքի տեսակը _____

Շինության ընդհանուր մակերեսը _____ քառ. մետր, որից՝

Անվանումը	Քանակը	Յուրաքանչյուրի մակերեսը (քառ. մետր)	Տարածքի նկատմամբ իրավունքի տեսակը
Լսարան			
Լաբորատորիա			
Վիվարիում			
Կլինիկական ամբիոն (բազա)			
Առարկայական կաբինետ			
Արհեստանոց			
Սպորտդահլիճ (մարզադահլիճ)			
Գրադարան-ընթերցասրահ			
Համակարգչային սենյակ			
Օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն)			
Այլ նշանակության			

Կից ներկայացվում են՝

1) լաբորատորիաների, արհեստանոցների գույքի, նյութերի, սարքերի ու սարքավորումների վիվարիումի, կլինիկական ամբիոնի (բազա) հագեցվածության ցուցակը.

2) մարզագույքի ցուցակը:

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն)

Ձև N

_____ _____ թ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ

Կազմակերպության անվանումը _____

Գործունեության տեսակը _____

Տնօրեն _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Գրքերի ընդհանուր թիվը _____ , որից՝ դասագրքեր _____,

ծրագրային գեղարվեստական _____ , ուսումնամեթոդական _____ ,

ուսումնաօժանդակ _____ , էլեկտրոնային-տեղեկատվական _____ ,

քարտեզ _____ ,

այլ _____ :

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն)
(հավելվածը լրաց., փոփ. 27.05.10 N 646-Ն, փոփ. 17.02.11 N 140-Ն, խմբ. 02.06.11 N 741-Ն, փոփ. 28.04.11 N 636-Ն, լրաց., փոփ., խմբ. 24.03.11 N 536-Ն, լրաց. 30.08.12 N 1107-Ն, փոփ., լրաց. 04.06.14 N 588-Ն, լրաց., խմբ. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն, 17.12.20 N 2089-Ն)

Հավելված N 14
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
(վերնագիրը փոփ. 04.06.14 N 588-Ն)

ՍԵՐԻԱ Ա **N 0000**

Սույնով վավերացվում է, որ

_____
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

_____
(գտնվելու վայրը)

_____
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Միջին մասնագիտական կրթական ծրագրեր

Նախարար _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ _____ թ

Կ.Տ.

_____
(լիցենզիայի գործողության ժամկետ

Սերիա 000 N 000000

(հավելվածը լրաց. 30.08.12 N 1107-Ն, փոփ. 04.06.14 N 588-Ն, փոփ., լրաց. 17.12.20 N 2089-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյա**

Հավելված N 15
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ) ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

(հավելվածն ուժը կորցրել է 30.08.12 N 1107-Ն)

Հավելված N 16
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ)

(հավելվածն ուժը կորցրել է 30.08.12 N 1107-Ն)

Հավելված N 17
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

(վերնագիրը փոփ. 04.06.14 N 588-Ն)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են բակալավրի կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման գործընթացը և լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:

2. Բակալավրի կրթական ծրագրի իրականացման լիցենզիան (այսուհետ՝ լիցենզիա) տալիս (մերժում) կամ դրա գործողությունը դադարեցնում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

(2-րդ կետը փոփ. 17.12.20 N 2089-Ն)

3. Լիցենզիա տալու (մերժելու) կամ դրա գործողությունը դադարեցնելու և մասնագիտությունների գծով՝ ընդունելության սահմանային տեղերի թվի փոփոխության, ըստ ուսուցման ձևերի, կրթության հիմքերի, ինչպես նաև օտարերկրյա

քաղաքացիների օտար լեզվով ուսուցում իրականացնելու գործունեության թույլտվության մասին որոշումն ընդունվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով: Լիցենզիա տալու (մերժելու) կամ դրա գործողությունը դադարեցնելու մասին որոշումներն ընդունվում են նախարարության կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունների հիման վրա:

(3-րդ կետը փոփ. 04.06.14 N 588-Ն, լրաց. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

4. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի կրթական գործունեության լիցենզավորումը, ուսումնական հաստատության հայտի հիման վրա, իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Մասնաճյուղի համար լիցենզիան տրվում է մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատությանը:

5. Լիցենզիա տալու մասին որոշումներն ընդունվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան:

6. Լիցենզավորված անձանց լիցենզիայի հետ միասին տրամադրվում է լիցենզիայի ներդիր, որը համարվում է լիցենզիայի անբաժանելի մասը: Լիցենզիայի ներդիրի ձևը հաստատում է նախարարը:

7. Լիցենզավորված անձինք լիցենզավորող մարմին են ներկայացնում լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություն, որի ձևը հաստատում է նախարարը: Հաշվետվությունները ներկայացվում են լիցենզիան ստանալու հաջորդ տարվանից՝ տարեկան մեկ անգամ, և դրանք ներկայացնելու ժամկետ է համարվում լիցենզիան ստանալու հաջորդ օրը:

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

8. Լիցենզիա ստանալու համար հայտատուն, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի ու 28-րդ հոդվածի և «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, ներկայացնում է հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

1) հայտ՝ համաձայն N 1 ձևի, որում նշվում են իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը, իրականացվելիք կրթական ծրագրի անվանումը, կրթության ձևը, տևողությունը, ուսուցման լեզուն, ավարտական փաստաթղթի անվանումը, սովորողների նախատեսվող սահմանային թիվ՝ ըստ կուրսերի (հայտատուի կողմից սովորողների նախատեսվող սահմանային թիվը՝ ըստ կուրսերի, հաշվարկվում է՝ հաշվի առնելով մեկ սովորողի հաշվով ուսումնական տարածքի նորմատիվների, լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի, իսկ բժշկական կրթական ծրագրերի մասով նաև վիվարիումի, կլինիկական ամբիոնի (բազայի), գրադարանային-տեղեկատվական համակարգի հագեցվածության չափաքանակները, ուսումնաարտադրական պրակտիկայի բազան), լիցենզիայի գործողության ժամկետը.

2) լիցենզավորվող գործունեության տեսակի իրականացման համար նախատեսվող տարածքի նկատմամբ իրավունքի (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) գրանցման վկայականի պատճենը.

3) տեղեկանք պրոֆեսորադասախոսական կազմի մասին, որում նշվում են պրոֆեսորադասախոսական կազմի անդամների անունները, ազգանունները, կրթությունը, այն ուսումնական հաստատության անվանումը, որն ավարտել է, որակավորումը, գիտական աստիճանը կամ կոչումը, պաշտոնը, առարկան, որը դասավանդելու է, տեղեկություն աշխատանքի հիմնական կամ համատեղության մասին, ստաժը (վարչական/մանկավարժական) ՝ համաձայն N 2 ձևի.

4) տեղեկանք բակալավրի կրթական ծրագրի իրականացման համար զբաղեցրած տարածքների (այդ թվում՝ լսարանային, լաբորատոր, արհեստանոցային, առարկայական կաբինետային, ամբիոնների, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային լաբորատորիաների, օժանդակ) մասին՝ համաձայն N 3 ձևի.

5) տեղեկանք ուսումնական գործընթացի գրադարանային-տեղեկատվական հագեցվածության (գրադարան, ընթերցասրահ, դասագրքային, էլեկտրոնային-տեղեկատվական) մասին՝ համաձայն N 4 ձևի.

6) տեղեկանք ուսումնական և արտադրական, իսկ բժշկական կրթական ծրագրերի մասով՝ կլինիկական պրակտիկաների բազաներով ապահովվածության մասին.

7) կրթական ծրագրի մասնագիտությունների ուսումնական պլանը և առարկայական ծրագրերի ցանկը.

8) սովորողների ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտական ամփոփիչ ատեստավորման (քննությունների), դիպլոմային աշխատանքների պաշտպանության կարգերը.

9) տեղեկանք օտարերկրյա ուսանողների ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման պայմանների ապահովվածության մասին (այդ թվում՝ նախապատրաստական բաժինների, դեկանատների, այլ կառուցվածքային ստորաբաժանումների և համապատասխան մասնագետների առկայության մասին).

10) կրթական ծրագրերի իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի պատճենը կամ լիցենզավորվող իրավաբանական անձի կողմից տեղեկանք կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներով գործարքներ չիրականացնելու մասին:

(8-րդ կետը լրաց. 04.06.14 N 588-Ն, լրաց. 20.09.18 N 1047-Ն)

9. Հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու և լիցենզավորման մասին եզրակացություն տալու նպատակով իրականացվում է ուսումնասիրություն: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրությունները կարող են իրականացվել հայտատուի մոտ:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

10. Լիցենզավորման պարտադիր պահանջները և պայմաններն են՝

1) ներկայացված հայտի (N 1 ձև) ձևի համապատասխանությունը սույն կարգով հաստատված հայտի (N 1 ձև) ձևին և դրանում ներկայացված տեղեկությունների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի պահանջի մասով՝

ա. ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմի առնվազն 50 տոկոսի համար տվյալ ուսումնական հաստատությունը պետք է հանդիսանա հիմնական աշխատավայր,

բ. ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմի դասախոսների առնվազն 60 տոկոսը պետք է ունենա պետական լիազորված մարմնի կողմից ճանաչված գիտական աստիճան (կամ), կոչում, այդ թվում՝ յուրաքանչյուր մասնագիտության մասնագիտական առարկաների գծով՝ 3-ը, իսկ արվեստի, ֆիզիկական կուլտուրայի բարձրագույն ուսումնական հաստատությունների, այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների նմանատիպ ֆակուլտետների և ամբիոնների դեպքում պետք է ունենա պետական լիազորված մարմնի կողմից ճանաչված գիտական աստիճան (կամ), կոչում (կամ), բնագավառին հատուկ պետական կոչումներ (կամ), պարգևներ (կամ), գիտական հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ և այլն,

գ. ուսումնական հաստատությունում բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով, ովքեր ունեն դասավանդվող դասընթացի ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն՝ առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորման աստիճանով, նույն կրթական ծրագրի մասնագիտական դասընթացների վարման համար, պետք է ներգրավված լինեն գիտական աստիճան և (կամ) գիտական կոչում (բացառությամբ արվեստի, ֆիզիկական կուլտուրայի բարձրագույն ուսումնական հաստատությունների, այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների նմանատիպ ֆակուլտետների և ամբիոնների) կամ համապատասխան գործունեության ոլորտում մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող գիտամանկավարժական կադրեր,

դ. օտար լեզուներով ուսուցում կազմակերպող ուսումնական հաստատությունը տվյալ մասնագիտությամբ դասավանդվող հիմնական առարկաների գծով ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 700-Ն որոշման հավելվածի 30-րդ կետի պահանջները.

3) ուսումնական տարածքի և լաբորատոր ապահովվածության պահանջի մասով՝

ա. զբաղեցրած ուսումնական տարածքների (այդ թվում՝ դասասենյակի, լաբորատորիայի, արհեստանոցի, առարկայական կաբինետի, ամբիոնների, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային լաբորատորիայի, օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի N 532 և մայիսի 3-ի N 379 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1490-Ն որոշմամբ սահմանված նորմատիվների պահանջներին, ուսումնական տարածքների նկատմամբ իրավունքը (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) հաստատող փաստաթղթերի, իսկ բժշկական կրթական ծրագրերի մասով՝ կլինիկական ամբիոնի (բազայի) գործող լիցենզիաների պատճենների առկայությունը,

բ. լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի սարքերով, սարքավորումներով, նյութերով, գույքով հագեցվածության համապատասխանությունը նախարարի հրամանով հաստատված չափաքանակների պահանջներին: Հեռավար ձևով կրթություն կազմակերպելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հեռավար կրթության կարգին համապատասխան ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ էլեկտրոնային և այլ կապի միջոցների, անհրաժեշտ սարքավորումների առկայությունը.

գ. բժշկական մասնագիտությունների գծով՝

ամբիոնները պետք է ունենան տեխնիկական և տեխնոլոգիական հագեցվածություն. անատոմիայի ամբիոնում պարտադիր է ունենալ նաև սեկցիոն սենյակ և դիակային նյութեր՝ կմախքներ, ոսկրեր, թաց պրեպարատներ, կաղապարվածքներ (մուլյաժներ), իսկ դատական բժշկության և ախտաբանական անատոմիայի ամբիոնների համար՝ նաև դիահերձարաններ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշմամբ նախատեսված տեխնիկական պահանջներին համապատասխան, իսկ սեփականը չունենալու դեպքում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերով սահմանված կարգով), համաձայն տվյալ առարկայի ծրագրի՝ համապատասխան ամբիոններում (կենսաբանության, հյուսվածքաբանության, ախտաբանական անատոմիայի, մանրէաբանության և այլն) ուսումնական խմբի առնվազն 2 ուսանողին պետք է հատկացվի մեկ մանրադիտակ, հյուսվածաբանության ամբիոնում՝ համապատասխան միկրոպրեպարատների, իսկ ախտաբանական անատոմիայի ամբիոնում՝ համապատասխան մակրո և միկրոպրեպարատների հավաքածուներ, դեղագործության կառավարում առարկայից. դասասենյակ՝ դեղատան մակետով (կահավորված դեղատան նման), ֆարմակոգնոզիա առարկայից՝ յուրաքանչյուրին 1 մանրադիտակ, դասասենյակ՝ 1 գազահեղուկային քրոմատոգրաֆով,

բոլոր մասնագիտական ամբիոններում պարտադիր է ունենալ առնվազն 2 ուսումնական լաբորատոր սենյակներ,

ստոմատոլոգիական ամբիոն հաճախող խմբերի յուրաքանչյուր 3-4 ուսանողի պետք է տրամադրվի մեկ ստոմատոլոգիական բազկաթոռ, իսկ բուժական ֆակուլտետի յուրաքանչյուր ուսանողի՝ տվյալ կլինիկական բաժանմունքում 1-2 մահճակալ.

4) ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով ուսումնական հաստատության՝

ա. ըստ կրթության ձևի, ուսումնական պլանի, ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական ծրագրերի համապատասխանությունը բարձրագույն մասնագիտական կրթական պետական ընդհանուր և մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջներին,

բ. անձնական գործի, ընդունելության քննություններին առնչվող և շրջանավարտների ավարտական փաստաթղթերը, կրեդիտային համակարգի, քննությունների անցկացման կարգի, սովորողների, ընդունելության, շարժունության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունիսի 15-ի N 320, 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2307-Ն, 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1240-Ն, 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանի պահանջներին.

գ. օտարերկրյա քաղաքացիների ուսուցումը (այդ թվում՝ նախապատրաստական բաժիններում) նախատեսված է կանոնադրությամբ և ուսուցման կարգի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների ուսուցման կարգին.

դ. օտարերկրացիների համար օտար լեզուներով ուսուցում կազմակերպելու դեպքում հաստատության կողմից իրականացվող համապատասխան օտար լեզվով ուսումնական ծրագրերի և պլանների առկայությունը.

5) գրադարանային-տեղեկատվական համակարգի պահանջի մասով՝ ուսումնական հաստատությունն իր տարածքի սահմաններում պետք է ապահովված լինի գրադարանային ֆոնդով, որը պետք է ներառի մասնագիտական և գեղարվեստական գրականություն, ուսումնամեթոդական ձեռնարկներ, ցուցադրական, աուդիո-վիդեո և մուլտիմեդիա ուսումնական նյութեր, իսկ օտարերկրացիների համար օտար լեզուներով ուսուցում կազմակերպելու դեպքում՝ նաև օտարալեզու մասնագիտական արդիական գրականությամբ: Ուսումնական հաստատությունը կարող է ունենալ նաև էլեկտրոնային գրականություն.

6) ուսումնաարտադրական կամ կլինիկական պրակտիկայի բազայի մասով՝ բնագավառի բազային հաստատությունների հետ կնքված պայմանագրերի (պրակտիկա անցնողների թվի նշմամբ) առկայությունը.

7) գործունեության իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի առկայությունը, եթե այդ գործունեության մասով հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառումը, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, պարտադիր է:

(10-րդ կետը լրաց. 04.06.14 N 588-Ն, խմբ., լրաց. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ, ՏՈՒԳԱՆՔԸ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

11. Կրթական ծրագրով գործունեության իրականացման լիցենզիայի պահանջների խախտման համար նախազգուշացումը, տուգանքը, լիցենզիայի գործողության դադարեցումն իրականացվում են օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

12. Լիցենզավորված անձն օրենքներով և սույն կարգով նախատեսված լիցենզիայի պարտադիր պահանջների կամ պայմանների խախտումները վերացնելու մասին համապատասխան հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է նախարարություն:

Ձև N

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱ

---------- -ի

(անունը, ազգանունը)

---------- - ի

(հայտատուի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը)

(հարկ վճարողի հաշվառման համարը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mail)

(գործունեության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mail))

Հ Ա Յ Տ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Դասիչը	Մասնա-գիտությունը	Կրթու-թյան ձևը	Սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի					Ուսուցման լեզուն	Ուսուցման տևողու-թյունը	Ուսուցման ավարտին տրվող որակավորումը	Ավարտական փաստաթուղթը	Լիցենզիայի գործողության ժամկետը
				1	2	3	4	5					

_____ _____ 20 թ. Դիմող _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(ձևը լրաց. 04.06.14 N 588-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

Ձև N

_____ _____ 20 թ

_____
(կազմակերպության անվանումը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը)

Տնօրեն (ռեկտոր) _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Անունը, ազգանունը	Կրթությունը, ավարտած բուհը	Որակա-վորումը	Պաշտոնը, դասավանդած առարկան	Աշխատանքը (հիմնական, համատե-ղությամբ)	Ստաժը (վարչական/ մանկա-վարժական)	Գիտական աստիճանը կամ կոչումը

Ձև N

_____ _____ 20 թ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ

ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կազմակերպության անվանումը _____

Տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը _____ _____ _____

Գործունեության իրականացման վայրը _____

Շինության տիպը՝ տիպային, հարմարեցված (ընդգծել), այլ

Շինության նկատմամբ իրավունքի տեսակը _____

Շինության ընդհանուր մակերեսը _____ քառ. մ, որից՝

Անվանումը	Քանակը	Յուրաքանչյուրի մակերեսը (քառ. մ)	Տարածքի նկատմամբ իրավունքի տեսակը
Լսարան			
Լաբորատորիա			
Վիվարիում			
Կլինիկական ամբիոն (բազա)			
Առարկայական կաբինետ			
Արհեստանոց			
Մարզադահլիճ			
Գրադարան – ընթերցասրահ			
Համակարգչային լաբորատորիա			
Ամբիոններ			
Օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն)			
Այլ նշանակության			

Կից ներկայացվում են՝

1) լաբորատորիաների, արհեստանոցների գույքի, նյութերի, սարքերի ու սարքավորումների վիվարիումի, կլինիկական ամբիոնի (բազա), ամբիոնների հագեցվածության ցանկը,

2) մարզագույքի ցանկը:

(ձևը լրաց. 04.06.14 N 588-Ն, 20.09.18 N 1047-Ն)

Ձև N

_____ _____ 20 թ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կազմակերպության անվանումը _____

Գործունեության տեսակը _____

Ռեկտոր _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Գրքերի ընդհանուր թիվը _____ , որից՝ դասագրքեր _____,

ծրագրային գեղարվեստական _____ , ուսումնամեթոդական _____ ,

ուսումնաօժանդակ _____ , էլեկտրոնային-տեղեկատվական _____ ,

քարտեզ _____ ,

այլ _____ :

(հավելվածը լրաց. 30.08.12 N 1107-Ն, փոփ., լրաց. 04.06.14 N 588-Ն, լրաց., խմբ. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար **Դ. Սարգսյան**

Հավելված N 18
ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

Ձ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
(վերնագիրը փոփ. 04.06.14 N 588-Ն)

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա N 0000

ՍԵՐԻԱ Բ

Սույնով վավերացվում է, որ

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

(գտնվելու վայրը)

(գործունեության իրականացման վայրը)

իրավունք ունի իրականացնելու Բակալավրի կրթական ծրագիր:

ՆԱԽԱՐԱՐ ---------- ----------

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.

Կ. Տ.

(լիցենզիայի գործողության ժամկետը)

Սերիա 000 N 000000

(հավելվածը լրաց. 30.08.12 N 1107-Ն, փոփ. 04.04.13 N 320-Ն, 04.06.14 N 588-Ն, փոփ., լրաց. 17.12.20 N 2089-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**

Հավելված N 19
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

(վերնագիրը փոփ. 04.06.14 N 588-Ն)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման գործընթացը և լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:

2. Մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման լիցենզիան (այսուհետ՝ լիցենզիա) տալիս (մերժում) կամ դրա գործողությունը դադարեցնում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

(2-րդ կետը փոփ. 17.12.20 N 2089-Ն)

3. Լիցենզիա տալու (մերժելու) կամ դրա գործողությունը դադարեցնելու և մասնագիտությունների գծով՝ ընդունելության սահմանային տեղերի թվի փոփոխության, ըստ ուսուցման ձևերի, կրթության հիմքերի, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների օտար լեզվով ուսուցում իրականացնելու գործունեության թույլտվության) մասին որոշումն ընդունվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով: Լիցենզիա տալու (մերժելու) կամ դրա գործողությունը դադարեցնելու մասին որոշումներն ընդունվում են նախարարության կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունների

հիման վրա:

(3-րդ կետը փոփ. 04.06.14 N 588-Ն, լրաց. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

4. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի կրթական գործունեության լիցենզավորումը, ուսումնական հաստատության հայտի հիման վրա, իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Մասնաճյուղի համար լիցենզիան տրվում է մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատությանը:

5. Լիցենզիա տալու մասին որոշումներն ընդունվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան:

6. Լիցենզավորված անձանց լիցենզիայի հետ միասին տրամադրվում է լիցենզիայի ներդիր, որը համարվում է լիցենզիայի անբաժանելի մասը: Լիցենզիայի ներդիրի ձևը հաստատում է նախարարը:

7. Լիցենզավորված անձինք լիցենզավորող մարմին են ներկայացնում լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություն, որի ձևը հաստատում է նախարարը: Հաշվետվությունները ներկայացվում են լիցենզիան ստանալու հաջորդ տարվանից՝ տարեկան մեկ անգամ, և դրանք ներկայացնելու ժամկետ է համարվում լիցենզիան ստանալու հաջորդ օրը:

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

8. Մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման լիցենզիա ստանալու համար հայտատուն, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի ու 28-րդ հոդվածի և «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, ներկայացնում է հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

1) հայտ՝ համաձայն N 1 ձևի, որում նշվում են իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը, իրականացվելիք կրթական ծրագրի անվանումը, կրթության ձևը, տևողությունը, ուսուցման լեզուն, ավարտական փաստաթղթի անվանումը, սովորողների նախատեսվող սահմանային թիվը՝ ըստ կուրսերի (սովորողների նախատեսվող սահմանային թիվը՝ ըստ կուրսերի, հայտատուի կողմից հաշվարկվում է՝ հաշվի առնելով մեկ սովորողի հաշվով ուսումնական տարածքի նորմատիվների, լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի, իսկ բժշկական կրթական ծրագրերի մասով նաև վիվարիումի, կլինիկական ամբիոնի (բազայի), գրադարանային-տեղեկատվական համակարգի հագեցվածության չափաքանակները, ուսումնաարտադրական պրակտիկայի բազան), լիցենզիայի գործողության ժամկետը.

2) լիցենզավորվող գործունեության տեսակի իրականացման համար նախատեսվող տարածքի նկատմամբ իրավունքի (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) գրանցման վկայականի պատճենը.

3) տեղեկանք պրոֆեսորադասախոսական կազմի մասին, որում նշվում են պրոֆեսորադասախոսական կազմի անդամների անունները, ազգանունները, կրթությունը, այն ուսումնական հաստատության անվանումը, որն ավարտել է, որակավորումը, գիտական աստիճանը կամ կոչումը, պաշտոնը, առարկան, որը դասավանդելու է, տեղեկություն աշխատանքի հիմնական կամ համատեղության մասին, ստաժը (վարչական/մանկավարժական)՝ համաձայն N 2 ձևի.

4) տեղեկանք բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար զբաղեցրած տարածքների (այդ թվում՝ լսարանային, լաբորատոր, արհեստանոցային, առարկայական կաբինետային, ամբիոնների, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային լաբորատորիաների, օժանդակ) մասին՝ համաձայն N 3 ձևի.

5) տեղեկանք ուսումնական գործընթացի գրադարանային, դասագրքային, էլեկտրոնային-տեղեկատվական) հագեցվածության մասին՝ համաձայն N 4 ձևի.

6) տեղեկանք ուսումնական և արտադրական, իսկ բժշկական կրթական ծրագրերի մասով՝ կլինիկական պրակտիկաների բազաներով ապահովվածության մասին.

7) կրթական ծրագրի մասնագիտությունների ուսումնական պլանը, առարկայական ծրագրերի ցանկը.

8) սովորողների ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտական ամփոփիչ ատեստավորման (քննությունների) և մագիստրոսական թեզի պաշտպանության կարգերը.

9) տեղեկանք օտարերկրյա ուսանողների ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման պայմանների ապահովվածության մասին (այդ թվում՝ նախապատրաստական բաժինների, դեկանատների, կառուցվածքային այլ ստորաբաժանումների և համապատասխան մասնագետների առկայության մասին).

10) կրթական ծրագրի իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի պատճենը կամ լիցենզավորվող իրավաբանական անձի կողմից՝ տեղեկանք կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներով գործարքներ չիրականացնելու մասին:

(8-րդ կետը լրաց. 04.06.14 N 588-Ն, 20.09.18 N 1047-Ն)

9. Հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու և լիցենզավորման մասին եզրակացություն տալու նպատակով իրականացվում է ուսումնասիրություն: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրությունները կարող են իրականացվել հայտատուի մոտ:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

10. Լիցենզավորման պարտադիր պահանջները և պայմաններն են՝

1) ներկայացված հայտի (N 1 ձև) ձևի համապատասխանությունը սույն կարգով հաստատված հայտի (N 1 ձև) ձևին և դրանում ներկայացված տեղեկությունների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի պահանջի մասով՝

ա. ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմի առնվազն 50 տոկոսի համար տվյալ ուսումնական հաստատությունը պետք է հանդիսանա հիմնական աշխատավայր,

բ. ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմի դասախոսների առնվազն 60 տոկոսը պետք է ունենա պետական լիազորված մարմնի կողմից ճանաչված գիտական աստիճան (կամ), կոչում, այդ թվում՝ յուրաքանչյուր մասնագիտության մասնագիտական առարկաների գծով՝ 3-ը, իսկ արվեստի, ֆիզիկական կուլտուրայի բարձրագույն ուսումնական հաստատությունների, այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների նմանատիպ ֆակուլտետների և ամբիոնների դեպքում պետք է ունենա պետական լիազորված մարմնի կողմից ճանաչված գիտական աստիճան (կամ), կոչում (կամ), բնագավառին հատուկ պետական կոչումներ (կամ), պարգևներ (կամ), գիտական հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ և այլն,

գ. ուսումնական հաստատությունում մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով, ովքեր ունեն գիտական աստիճան և (կամ) գիտական կոչում կամ դասընթացների ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն՝ առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորման աստիճանով, և համապատասխան գործունեության ոլորտում հետազոտական աշխատանքի փորձ (բացառությամբ արվեստի, ֆիզիկական կուլտուրայի բարձրագույն ուսումնական հաստատությունների, այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների նմանատիպ ֆակուլտետների և ամբիոնների),

դ. օտար լեզուներով ուսուցում կազմակերպող ուսումնական հաստատությունը՝ տվյալ մասնագիտությամբ դասավանդվող հիմնական առարկաների գծով ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 700-Ն որոշման հավելվածի 30-րդ կետի պահանջները.

3) ուսումնական տարածքի և լաբորատոր ապահովվածության պահանջի մասով՝

ա. զբաղեցրած ուսումնական տարածքների (այդ թվում՝ դասասենյակի, լաբորատորիայի, արհեստանոցի, առարկայական կաբինետի, ամբիոնների, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային լաբորատորիայի, օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի N 532 և մայիսի 3-ի N 379 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1490-Ն որոշմամբ սահմանված նորմատիվների պահանջներին, ուսումնական տարածքների նկատմամբ իրավունքը (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) հաստատող փաստաթղթերի, իսկ բժշկական կրթական ծրագրերի մասով՝ կլինիկական ամբիոնի (բազայի) գործող լիցենզիաների պատճենների առկայությունը,

բ. լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի՝ սարքերով, սարքավորումներով, նյութերով, գույքով հագեցվածության համապատասխանությունը նախարարի հրամանով հաստատված չափաքանակների պահանջներին: Հեռավար ձևով կրթություն կազմակերպելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հեռավար կրթության կարգին համապատասխան ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ էլեկտրոնային և այլ կապի միջոցների, անհրաժեշտ սարքավորումների առկայությունը.

գ. բժշկական մասնագիտությունների գծով՝

ամբիոնները պետք է ունենան տեխնիկական և տեխնոլոգիական հագեցվածություն. անատոմիայի ամբիոնում պարտադիր է ունենալ նաև սեկցիոն սենյակ և դիակային նյութեր՝ կմախքներ, ոսկրեր, թաց պրեպարատներ, կաղապարվածքներ (մուլյաժներ), իսկ դատական բժշկության և ախտաբանական անատոմիայի ամբիոնների համար՝ նաև դիահերձարաններ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշմամբ նախատեսված տեխնիկական պահանջներին համապատասխան, իսկ սեփականը չունենալու դեպքում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերով սահմանված կարգով), համաձայն տվյալ առարկայի ծրագրի՝ համապատասխան ամբիոններում (կենսաբանության, հյուսվածքաբանության, ախտաբանական անատոմիայի, մանրէաբանության և այլն) ուսումնական խմբի առնվազն 2 ուսանողին պետք է հատկացվի մեկ մանրադիտակ, հյուսվածաբանության ամբիոնում՝ համապատասխան միկրոպրեպարատների, իսկ ախտաբանական անատոմիայի ամբիոնում՝ համապատասխան մակրո և միկրոպրեպարատների հավաքածուներ, դեղագործության կառավարում առարկայից. դասասենյակ՝ դեղատան մակետով (կահավորված դեղատան նման), ֆարմակոգնոզիա առարկայից՝ յուրաքանչյուրին 1 մանրադիտակ, դասասենյակ՝ 1 գազահեղուկային քրոմատոգրաֆով,

բոլոր մասնագիտական ամբիոններում պարտադիր է ունենալ առնվազն 2 ուսումնական լաբորատոր սենյակներ,

ստոմատոլոգիական ամբիոն հաճախող խմբերի յուրաքանչյուր 3-4 ուսանողի պետք է տրամադրվի մեկ ստոմատոլոգիական բազկաթոռ, իսկ բուժական ֆակուլտետի յուրաքանչյուր ուսանողի՝ տվյալ կլինիկական բաժանմունքում 1-2 մահճակալ.

4) ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով՝ ուսումնական հաստատության՝

ա. ըստ կրթության ձևի, ուսումնական պլանի, ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական

ծրագրերի համապատասխանությունը բարձրագույն մասնագիտական կրթական պետական ընդհանուր և մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջներին,

բ. անձնական գործի, ընդունելության քննություններին առնչվող և շրջանավարտների ավարտական փաստաթղթերը, կրեդիտային համակարգի, քննությունների անցկացման կարգի, սովորողների, ընդունելության, շարժունության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունիսի 15-ի N 320, 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2307-Ն, 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1240-Ն, 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանի պահանջներին.

գ. օտարերկրյա քաղաքացիների ուսուցումը (այդ թվում՝ նախապատրաստական բաժիններում) նախատեսված է կանոնադրությամբ, և ուսուցման կարգի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների ուսուցման կարգին.

դ. օտարերկրացիների համար օտար լեզուներով ուսուցում կազմակերպելու դեպքում հաստատության կողմից իրականացվող համապատասխան օտար լեզվով ուսումնական ծրագրերի և պլանների առկայությունը.

5) գրադարանային-տեղեկատվական համակարգի պահանջի մասով՝ ուսումնական հաստատությունն իր տարածքի սահմաններում պետք է ապահովված լինի գրադարանային ֆոնդով, որը պետք է ներառի մասնագիտական և գեղարվեստական գրականություն, ուսումնամեթոդական ձեռնարկներ, ցուցադրական, աուդիո-վիդեո և մուլտիմեդիա ուսումնական նյութեր, իսկ օտարերկրացիների համար օտար լեզուներով ուսուցում կազմակերպելու դեպքում՝ նաև օտարալեզու մասնագիտական արդիական գրականությամբ: Ուսումնական հաստատությունը կարող է ունենալ նաև էլեկտրոնային գրականություն.

6) ուսումնաարտադրական կամ կլինիկական պրակտիկայի բազայի մասով՝ բնագավառի բազային հաստատությունների հետ կնքված պայմանագրերի (պրակտիկա անցնողների թվի նշմամբ) առկայությունը.

7) գործունեության իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի առկայությունը, եթե այդ գործունեության մասով հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառումը, համաձայն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, պարտադիր է:

(10-րդ կետը լրաց. 04.06.14 N 588-Ն, խմբ., լրաց. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ, ՏՈՒԳԱՆՔԸ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

11. Կրթական ծրագրի իրականացման լիցենզիայի համար նախազգուշացումը, տուգանքը, լիցենզիայի գործողության դադարեցումն իրականացվում են օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

12. Լիցենզավորված անձն օրենքներով և սույն կարգով նախատեսված լիցենզիայի պարտադիր պահանջների կամ պայմանների խախտումները վերացնելու մասին համապատասխան հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է նախարարություն:

Ձև N

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱ

---------- -ի

(անունը, ազգանունը)

---------- - ի

(հայտատուի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը)

(հարկ վճարողի հաշվառման համարը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mail))

(գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mail))

Հ Ա Յ Տ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Դասիչը	Մասնա-գիտությունը	Կրթու-թյան ձևը	Սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի					Ուսուցման լեզուն	Ուսուցման տևողությունը	Ուսուցման ավարտին տրվող որակավորումը	Ավար-տական փաստա-թուղթը	Լիցենզիայի գործողության ժամկետը
				1	2	3	4	5					

ԴԻՄՈՂ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.

(ձևը լրաց. 04.06.14 N 588-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

Ձև N

_____ _____ 20 թ

_____

(կազմակերպության անվանումը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը)

Տնօրեն (ռեկտոր) _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Անունը, ազգանունը	Կրթությունը, ավարտած բուհը	Որակավորումը	Պաշտոնը, դասավանդած առարկան	Աշխատանքը (հիմնական, համատեղությամբ)	Ստաժը (վարչական/ մանկավարժական)	Գիտական աստիճանը կամ կոչումը

Ձև N

_____ _____ 20 թ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կազմակերպության անվանումը _____

Տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը _____ _____ _____

Գործունեության իրականացման վայրը _____

Շինության տիպը՝ տիպային, հարմարեցված (ընդգծել), այլ

Շինության նկատմամբ իրավունքի տեսակը _____

Շինության ընդհանուր մակերեսը՝ _____ քառ. մ, որից՝

Անվանումը	Քանակը	Յուրաքանչյուրի մակերեսը (քառ. մ)	Տարածքի նկատմամբ իրավունքի տեսակը
Լսարան			
Լաբորատորիա			
Վիվարիում			
Կլինիկական ամբիոն (բազա)			
Առարկայական կաբինետ			
Արհեստանոց			
Մարզադահլիճ			
Գրադարան – ընթերցասրահ			
Համակարգչային լաբորատորիա			
Ամբիոններ			
Օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն)			
Այլ նշանակության			

Կից ներկայացվում են՝

1) լաբորատորիաների, արհեստանոցների գույքի, նյութերի, սարքերի ու սարքավորումների վիվարիումի, կլինիկական ամբիոնի (բազա), ամբիոնների հագեցվածության ցանկը,

2) մարզագույքի ցանկը:

(ձևը լրաց. 04.06.14 N 588-Ն, լրաց. 20.09.18 N 1047-Ն)

Ձև N

_____ _____ 20 թ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կազմակերպության անվանումը _____

Գործունեության տեսակը _____

Ռեկտոր _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Գրքերի ընդհանուր թիվը _____ , որից՝ դասագրքեր _____,

ծրագրային գեղարվեստական _____ , ուսումնամեթոդական _____ ,

ուսումնաօժանդակ _____ , էլեկտրոնային-տեղեկատվական _____ ,

քարտեզ _____ ,

այլ _____ :

(հավելվածը լրաց. 30.08.12 N 1107-Ն, փոփ., լրաց. 04.06.14 N 588-Ն, լրաց., խմբ. 20.09.18 N 1047-Ն, փոփ. 17.12.20 N 2089-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**

Հավելված N 20
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

Ձ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
(վերնագիրը փոփ. 04.06.14 N 588-Ն)

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա N 0000

ՍԵՐԻԱ Մ

Սույնով վավերացվում է, որ ----------

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

(գտնվելու վայրը)

(գործունեության իրականացման վայրը)

իրավունք ունի իրականացնելու մագիստրոսի կրթական ծրագիր։

ՆԱԽԱՐԱՐ ---------- ----------

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.

Կ. Տ.

(լիցենզիայի գործողության ժամկետը)

Սերիա 000 N 000000

(հավելվածը լրաց. 30.08.12 N 1107-Ն, փոփ. 04.04.13 N 320-Ն, 04.06.14 N 588-Ն, փոփ., լրաց. 17.12.20 N 2089-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**